

Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

Բովանդակություն

Ծրագրի տեսլականը և նպատակները

Ոլորտային ռազմավարությունները

1. Պետական կառավարման և իրավական համակարգը

- 1.1 . Պետական կառավարման արդիականացում
- 1.2 . Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխումներ
- 1.3 . Մարդու իրավունքների պաշտպանություն և արդարադատություն
- 1.4 . Անվտանգություն և հասարակական կարգ
- 1.5 . Արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկերի նվազեցում
- 1.6 . Պետություն-եկեղեցի կապերի հետագա խորացում:

2. Արտաքին քաղաքականությունն ու պաշտպանությունը

- 2.1 . Արտաքին քաղաքականություն
- 2.2 . Պաշտպանություն:

3. Տնտեսական ոլորտը

- 3.1 . Տնտեսության առաջընթաց, գործարար միջավայր և փոքր ու միջին ձեռնարկատիրություն
- 3.2 . Հարկաբյուջետային քաղաքականություն
- 3.3 . Արտադրական ենթակառուցվածքներ
- 3.4 . Բնապահպանություն և բնօգտագործում
- 3.5 . Գյուղատնտեսություն
- 3.6 . Քաղաքաշինություն
- 3.7 . Պետական գույքի կառավարում
- 3.8 . Կադաստր:

4. Սոցիալական ոլորտը

- 4.1 . Կրթություն և գիտություն
- 4.2 . Առողջապահություն
- 4.3 . Սոցիալական պաշտպանություն, ժողովրդագրություն և վերաբնակեցում
- 4.4 . Մշակույթ և զբոսաշրջություն
- 4.5 . Սպորտ և երիտասարդություն:

Ծրագրի տեսլականը և նպատակները

Արցախի Հանրապետության Նախագահի ծրագիրն ընդգրկում է Արցախի Հանրապետության քաղաքական, սոցիալ-տնտեսական գերակայությունները և զարգացման հիմնական ուղղությունները 2017-2020 թթ. միջնաժամկետ հեռանկարում: Ծրագիրը միտված է Արցախի անվտանգությունն ու անկախությունը, արցախցիների կյանքի որակի էական բարձրացումը երաշխավորող նպատակների իրագործմանը, ժողովրդավարական և իրավական պետության ամրապնդմանը և այն մարտահրավերների հաղթահարմանը, որոնց այսօր բախվում է Արցախը:

Ծրագրի տեսլականը կառուցվել է անվտանգ, ազատ ու կայուն զարգացող Արցախ ունենալու հենքային առանցքի շուրջ:

Արցախի անկախությունն ու անվտանգությունը բացառիկ արժեքներ են, որոնց պահպանումը կերաշխավորի ամուր պաշտպանությունը: Երկրի պաշտպանունակության, անվտանգության համակարգի ամրապնդումն ու զորացումը, պաշտպանության բանակի մարտունակության բարձրացումը, զինձառայողների սոցիալական պայմանների բարելավումը ծրագրային առաջնահերթություններից են:

Արցախի Հանրապետության անկախության միջազգային ճանաչումը և ադրբեջանա-դարաբադյան հակամարտության խաղաղ կարգավորումը կշարունակեն մնալ արտաքին քաղաքականության գերակա ուղղությունները:

Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդումը մեր հաջողությունների հուսալի գրավականն է:

Աճի կայուն տեմպերի ապահովմամբ տնտեսական զարգացումը Արցախի Հանրապետության պետականության ամրապնդման և արցախցու՝ բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորությունների ու կարողությունների անընդհատ ընդլայնման երաշխիքն է:

Մեր քաղաքացիները պետք է զգան, որ իրենք ապրում են պաշտպանված, ապահով և անվտանգ երկրում, որտեղ յուրաքանչյուրն ունի ինքնադրսևորման, ինքնաիրացման և արժանավայել կյանքով ապրելու բոլոր հնարավորությունները, որտեղ յուրաքանչյուրի համար առկա են կրթվելու ու զարգանալու, առողջապահական ու մշակութային ծառայություններից լիիրավ օգտվելու և արժանապատիվ ծերության պայմանները:

Նման իրավունքների իրացումը կարող է արդյունավետ իրագործվել միայն գործուն սահմանադրաիրավական համակարգում: Այս առումով կարևորվում է Արցախի Սահմանադրությամբ ամրագրված նախագահական կառավարման համակարգին սահուն անցումը. Սահմանադրությամբ նախատեսված մարմինների և Սահմանադրությանը համապատասխան իրավական դաշտի ձևավորումը:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում ձեռնարկված բարեփոխումները կզարգացնեն համակարգի մարմինների ղեկավարման կարողություններն ու մոտեցումները և կբարելավեն դրանց որակը՝ վերջիններս

դարձնելով առավել արդյունավետ, մարդակենտրոն և թափանցիկ, ինչպես նաև կբարձրացնեն այդ մարմինների և ինստիտուտների հաշվետվողականությունը հանրության առջև, ինչը կնպաստի արդարության և վստահության մթնոլորտի ամրապնդմանը մեր հասարակությունում:

Ձևավորված բարենպաստ գործարար միջավայրը և պետության ակտիվ տնտեսական քաղաքականությունը՝ ուղղված տնտեսության գերակա ոլորտների դինամիկ ու համաչափ զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, տեղական արտադրողին աջակցմանը և արտահանման խթանմանը, Արցախը կդարձնեն գրավիչ ներքին և արտաքին ներդրողների համար: Կարևորվում է տնտեսության ոլորտների գործունեության փոխկապակցվածության ապահովումը՝ մաքսիմալ սիներգետիկ արդյունք գրանցելու տեսանկյունից:

Պետության ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչի՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված շարունակական և նոր ծրագրերի իրականացումը կապահովի շոշափելի արդյունքներ այդ ասպարեզում:

Արցախի անվտանգության համատեքստում կարևորվում է մեր բնական պաշարների արդյունավետ, թափանցիկ օգտագործման և այդ ոլորտում պետության համար առավելագույն շահույթի ձևավորման խնդիրը, քանի որ դրանք ոչ միայն այսօրվա, այլ նաև մեր ապագա սերունդների անվտանգության ապահովման կարևորագույն գործոններից են:

Շարունակելով երկրի էներգետիկ անվտանգության ապահովմանը միտված ակտիվ քաղաքականությունը՝ Արցախը կդառնա էլեկտրաէներգիայի արտադրության գծով ոչ միայն ինքնաբավ, այլ նաև արտահանող երկիր տարածաշրջանում:

Գյուղատնտեսության զարգացման նոր հայեցակարգային մոտեցումների ու սկզբունքների ներդրումը գյուղատնտեսությունը կփոխադրի զարգացման ինտենսիվ ուղի, որը կբարձրացնի գյուղմթերքների արտադրության ծավալային և որակական ցուցանիշները, կխթանի մթերող ու վերամշակող ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը՝ նպաստելով պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Քաղաքաշինության բնագավառում ընդգծված ուշադրություն կդարձվի նոր շենքերի և շինությունների ճարտարապետական տեսքին՝ հաշվի առնելով մեր ազգային ոճն ու առանձնահատկությունները:

Սոցիալական պաշտպանության ոլորտում կբարձրացվեն իրականացվող ծրագրերի ու մատուցվող ծառայությունների որակը, արդյունավետությունն ու հասցեականությունը: Հատուկ ուշադրության կենտրոնում կլինեն զոհված ազատամարտիկների ու զինծառայողների, բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքները:

Առողջապահական համակարգը կհամալրվի բարձր որակավորված մասնագետներով և անհրաժեշտ արդիական բուժսարքավորումներով՝ բարձրացնելով Արցախում հիվանդների լիարժեք հետազոտման ու բուժման մակարդակը:

Կրթության ոլորտի ռազմավարությունը հնարավորություններ կապահովի,

որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի իր հակումներին և ընդունակություններին համապատասխան ստանա որակյալ կրթություն՝ հասարակության և հանրապետության տնտեսության արդի կարիքներին ու պահանջներին համապատասխան:

Մշակույթի և զբոսաշրջության զարգացումը միտված կլինի նաև Արցախն աշխարհին ճանաչելի դարձնելու նպատակի իրագործմանը:

Սույն ծրագրի իրականացմամբ 2017-2020 թվականների ընթացքում նպատակադրվում է՝

1. Պաշտպանության բանակի հզորացում, սպայական անձնակազմի սոցիալական երաշխիքների ընդլայնում, բնակարանաշինություն.
2. արտաքին քաղաքականության ոլորտում առաջընթացի արձանագրում.
3. առնվազն 8 տոկոս միջին տարեկան տնտեսական աճի ապահովում. գործարար միջավայրի շարունակական բարելավում, ներդրումների խթանում, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում, գյուղատնտեսության ոլորտում նոր հայեցակարգային սկզբունքների ու մոտեցումների ներդրում, ներմուծման փոխարինում՝ տեղական արտադրության խրախուսմամբ, արտահանման խթանում, արդիական տեխնոլոգիաների ներդրում, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպերի արագացում, էներգետիկ համակարգի զարգացում՝ Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը մինչև 2020 թվականը հասցնելով տարեկան 550 մլն կՎտ.ժ՝ նպատակ դնելով 2023 թվականին ունենալ մինչև 750 մլն կՎտ.ժ Էլեկտրաէներգիայի տարեկան թողարկման հնարավորություն, միաժամանակ ներդնելով արևային համակարգային կայանների ստեղծման խթաններ.
4. երկրում որդեգրած սոցիալական քաղաքականության շարունակականության ապահովում.
5. առողջապահության ոլորտում բուժիմնարկների կառուցման և վերակառուցման ծրագրի ավարտում, համակարգի համալրում անհրաժեշտ սարքավորումներով, բժիշկների պատրաստման ու վերապատրաստման գործընթացի ակտիվացում, հիվանդների սպասարկման բարելավում.
6. կրթության, գիտության և սպորտի բնագավառներում ուսման որակի բարձրացում, արհեստավոր և կրտսեր մասնագետների թվաքանակի ավելացում, կիրառական գիտությունների զարգացում, սպորտի մասսայականացում, օլիմպիական և ոչ օլիպիական մարզաձևերի ցուցանիշների բարձրացում.
7. ազգային մշակութային արժեքների պահպանում և միջազգային դաշտում արցախյան մշակույթի ներկայացում.
8. Արցախը դարձնել մեծ պահանջարկ ունեցող զբոսաշրջային գոտի՝ նոր ենթակառուցվածքների ստեղծման, բացառիկ ծառայությունների ներդրման շնորհիվ:

Ոլորտային ռազմավարությունները

1. Պետական կառավարման և իրավական համակարգը

1.1 . Պետական կառավարման արդիականացում

Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի արդիականացումը պայմանավորված է ինչպես սահմանադրական բարեփոխումներով, այնպես էլ այսօրվա կառավարման համակարգը երկրի առջև ծառայած մարտահրավերներին ժամանակին և արդյունավետ արձագանքելու հնարավորությամբ օժտելու հրամայականով: Ժամանակակից զարգացումները միտված են ապահովելու Սահմանադրությամբ ամրագրված նախագահական կառավարման համակարգին սահուն անցումը և պետական կառավարումը ավելի ճկուն, արդյունավետ, նվազ ծախսատար և մարդակենտրոն դարձնելուն: Բարեփոխումները պետական կառավարման համակարգի օպտիմալացման և աշխատանքի մեթոդների փոփոխության ուղղությամբ արդեն իրականացվում են, և դա է լինելու առաջիկա տարիների գործունեության թիրախներից մեկը:

Սահմանադրական բարեփոխումների իրացման այս փուլում կարևորվում են սահմանադրական բարեփոխումների օրենսդրական ապահովման աշխատանքները՝ Արցախի Սահմանադրությունից բխող օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակումն ու ընդունումը, ինչպես նաև կառավարման արդյունավետ համակարգի մշակման համար օրենսդրական պատշաճ հիմքերի նախատեսումը:

Արցախի Հանրապետության քաղաքացիներին և բիզնես ոլորտին պետության կողմից մատուցվող ծառայությունների որակը, մատչելիությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կխթանվի էլեկտրոնային եղանակով պետական ծառայությունների մատուցումը: Այս ոլորտում իրականացվող բարեփոխումները միտված են քաղաքացիների համար «մեկ պատուհանի» սկզբունքով ծառայություններ ստանալու հնարավորությունների ստեղծմանը:

Պետական կառավարման համակարգի արդիականացման ոլորտում նախատեսվում է՝

1) վերհանել և վերացնել պետական կառավարման մարմինների կողմից քաղաքացիներին և տնտեսավարող սուբյեկտներին նվազագույն կոռուպցիոն ռիսկեր պարունակող ծառայությունների մատուցման նպատակ հետապնդող ավելորդ ընթացակարգերը և օղակները, նվազագույնի հասցնել առօրյա կյանքում պետական կառավարման մարմինների հետ անհարկի շփումները:

2) բարձրացնել պետական կառավարման մարմինների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, ինչպես նաև կատարելագործել նրանց և քաղաքացիների ու տնտեսավարող սուբյեկտների միջև արդյունավետ հետադարձ կապը:

3) կրճատել պետական կառավարման համակարգի ծախսերը՝ հիմք ընդունելով իրականացվող գործառույթների անհրաժեշտությունն ու փաստացի իրականացումը:

4) հրաժարվել պետական կառավարման մարմիններում կրկնվող կամ անարդյունավետ գործառույթներից:

1.2 . Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխումներ

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում կձեռնարկվեն բարեփոխումներ՝ ուղղված իրավական դաշտը Արցախի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանեցնելուն, մարմինների ղեկավարման կարողությունների ու մոտեցումների զարգացմանը և գործունեության արդյունավետության ու հանրության առջև հաշվետվողականության բարձրացմանը: Այս առումով կարևորվում են «Արցախի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Թափոնների մասին» Արցախի Հանրապետության նոր օրենքների նախագծերի մշակումը և ընդունումը՝ համապատասխան նոր ենթաօրենսդրական դաշտերի ձևավորմամբ:

Նոր ձևավորված օրենսդրության համաձայն՝ Արցախի Հանրապետության տարածքային կառավարման մարմինները՝ ներկայում գործող շրջանների սահմաններում, կվերափոխվեն տեղական ինքնակառավարման մարմինների (բացառությամբ Ստեփանակերտ քաղաքի):

Նախատեսվում է «Տեղական ինքնակառավարման մասին» նոր օրենքով սահմանել համայնքների ավագանիների ընտրության համամասնական կարգ:

Նոր ձևավորված բազմաբնակավայր համայնքներում նախատեսվում է ներդնել վարչական ղեկավարների ինստիտուտը, որը բնակավայրերում իրականացնելու է համայնքի ղեկավարի գործառույթների զգալի մասը:

Համայնքային ծառայության համակարգի ներդրմամբ նախատեսվում է նոր ձևավորված համայնքների աշխատակազմերում առավել կանոնակարգված դարձնել աշխատանքային հարաբերությունները, բարձրացնել համայնքային ծառայողների մասնագիտական որակների աստիճանը, ինչպես նաև համայնքային ծառայողների համար սահմանել որոշակի սոցիալական երաշխիքներ:

Նախատեսվում է նաև տարածքային կառավարման մարմինների (շրջանների վարչակազմերի ղեկավարների) լիազորությունների գերակշիռ մասը պատվիրակել նոր ձևավորված տեղական ինքնակառավարման մարմիններին՝ որպես պետության պատվիրակված լիազորություններ:

Տարածքային կառավարման մարմիններին վերապահված գործառույթներից՝

տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների կատարման նկատմամբ իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության իրավասությունը վերապահվելու է Արցախի Հանրապետության կառավարության սահմանած իրավական հսկողության բարձրագույն մարմնին:

Նոր օրենքների ընդունումը կհանգեցնի մի շարք օրենսդրական և ենթօրենսդրական փոփոխությունների: Առաջնահերթ նախատեսվում է փոփոխությունների իրականացում գործող մի շարք օրենքներում, այդ թվում՝

- 1) Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն՝ համայնքների ավագանիների ընտրության նոր կարգի ներդրմամբ.
- 2) Արցախի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող հողատարածքների տնօրինման և տիրապետման նոր քաղաքականության ներդրմամբ.
- 3) Արցախի Հանրապետության «Տեղական հանրաքվեի մասին» օրենքում փոփոխություն.
- 4) Արցախի Հանրապետության «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն՝ ներառելով համայնքային ծառայության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում նախատեսվող այլ պաշտոններ.
- 5) Արցախի Հանրապետության «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն՝ վերահսկողության իրականացման նոր մարմնի և կարգի ներդրմամբ:

1.3 . Մարդու իրավունքների պաշտպանություն և արդարադատություն

Մարդու իրավունքների պաշտպանություն

Երկրում շարունակվելու է մարդու իրավունքների վիճակի բարելավման հետևողական քաղաքականության իրականացումը՝ այն համարելով գործադիր իշխանության գործունեության առանցքային ուղղություն: Այդ նպատակով համապատասխան ուսումնասիրությունների հիման վրա մշակվելու և իրականացվելու է Մարդու իրավունքների համալիր ռազմավարություն՝ ուղղված մարդու իրավունքներին եւ ազատություններին առնչվող իրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի կատարելագործմանը, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ու ընթացակարգերի մատչելիության մեծացմանը, ինչպես նաև իրավապաշտպան կառույցների կարողությունների գորացմանը:

Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունը մշակելիս հիմք են ընդունվելու հետևյալ ելակետային դրույթները.

- 1) մարդու իրավունքների երաշխավորման ոլորտում իրական խնդիրների նախնական վերհանում և կարիքների մասնագիտական գնահատում.
- 2) քաղաքացիական հասարակության կառույցների ներգրավում.

3) միջազգային առաջավոր փորձի հաշվառում, այդ թվում՝ հրավիրյալ մասնագետների ներգրավման եղանակով.

4) ռազմավարության իրատեսականության ապահովում և դրա կենսագործման արդյունավետությունը գնահատելու նպատակով չափելի ցուցանիշների սահմանում.

5) հասարակության իրավական մշակույթի բարձրացմանն ուղղված միջոցառումների կարևորում.

6) երեխաների իրավունքների երաշխավորման հատուկ կարևորում.

7) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների երաշխավորման հատուկ կարևորում.

8) փակ հաստատություններում գտնվող անձանց իրավունքների հատուկ կարևորում:

Արդարադատություն

Արցախի Հանրապետության արդարադատության ոլորտում 2017-2020 թվականների ընթացքում կմշակվեն գործուն կառուցակարգեր և մեխանիզմներ՝ ուղղված ոլորտի գործունեության կատարելագործմանն ու արդյունավետության բարձրացմանը, որի առանցքը կկազմեն Արցախի Հանրապետության 2017 թվականի Սահմանադրության ընդունմամբ պայմանավորված բարեփոխումները:

Շարունակական և հետևողական աշխատանքներ կիրականացվեն բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացման ուղղությամբ:

Գործուն և համակարգային բնույթ կկրեն համակարգի ստորաբաժանումների գործունեության նկատմամբ տարվող հսկողությունը, դրա կազմակերպչական և մեթոդական կառավարումը, պրակտիկ օգնության ցուցաբերումն ու ստուգումների իրականացումը, վերհանված թերությունների և բացթողումների քննարկումն ու դրանց վերացման համար համապատասխան միջոցների կիրառումը:

Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից կշարունակվի հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, քաղաքացիների՝ իրենց իրավունքների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հետևողական միջոցառումների իրականացումը:

Իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման ոլորտում կներդրվեն բոլոր միջոցները՝ ընթացիկ օրենսդրության մեջ արտացոլելու միջոցով կենսագործելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և պետական կառավարմանը վերաբերող Սահմանադրությամբ ամրագրված դրույթները:

Նշված ժամանակահատվածում իրականացվող միջոցառումները առաջնահերթ նպատակ ունեն ապահովելու Սահմանադրությամբ ամրագրված նախագահական

կառավարման համակարգին սահուն անցումը, որի համար անհրաժեշտ են կառավարման արդյունավետ համակարգ և օրենսդրական պատշաճ հիմքեր՝ Սահմանադրության ընդունմամբ պայմանավորված և Սահմանադրության՝ օրենքով կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող դրույթների հիման վրա ընդունման կամ փոփոխման ենթակա օրենքների նախագծերի և դրանցից բխող այլ իրավական ակտերի նախագծերի մշակում:

Այսպես, 2017 թվականի ընթացքում մշակվելու են «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին», «Սահմանադրական դատավարության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերը:

2018 թվականի ընթացքում նախատեսվում է մշակել «Անձնական տվյալների պաշտպանության մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Երեխայի իրավունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հավաքների ազատության մասին», «Տեղեկատվության ազատության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերը:

2019 թվականի ընթացքում նախատեսվում է մշակել «Կուսակցությունների մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին», «Արհեստակցական միությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Անհատական և կոլեկտիվ հանրագրերի մասին», «Փաստաբանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքների

նախագծերը և Արցախի Հանրապետության աշխատանքային, ընտրական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերի նախագծերը:

Մնանկության ոլորտում նախատեսվում է իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ խթաններ ստեղծելով սնանկության վարույթում կազմակերպությունների առողջացմանը և դրա համար գործուն միջոցներ ձեռնարկել՝ որպես գերակայություն սահմանելու ուղղությամբ, ինչպես նաև կատարելագործել սնանկության կառավարիչների որակավորման քննությունների անցկացման կարգը:

Կիրականացվեն նաև անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ և միջոցառումներ, որոնք կապահովեն նոտարիատի, քաղաքացիական կացության ակտերի և իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտներում վարչարարության արդյունավետության բարձրացումը, ժամկետների կրճատումը և քաղաքացիների սպասարկման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծումը, կվերացնեն բյուրոկրատական քաշքշուկները և քաղաքացիների համար առավել անհարմարություն ստեղծող գործառույթները:

Շարունակական բնույթ կկրեն առանձին միջազգային իրավական փաստաթղթերի վավերացման նախաձեռնությունները: Շնորհիվ այս միջոցառումների հետևողականորեն կապահովվի Սահմանադրությունից բխող օրենսդրության արդիականացումը, մարդու իրավունքների և ազատությունների առավել արդյունավետ պաշտպանությունը, դատական համակարգի մատչելիությունն ու արդյունավետությունը և իրավունքի գերակայությունն ապահովող օրենսդրական դաշտի ձևավորումը:

Դատաիրավական համակարգ

Արդարությունը հիմնվում է իրավունքի գերակայության, մարդուն որպես բարձրագույն արժեք ճանաչելու գաղափարի վրա՝ դրանից բխող հետևանքներով: Արդարության ապահովումը, լինելով բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրը, այնուհանդերձ, դատարանների հիմնական գործառույթն է:

Դատաիրավական համակարգի կատարելագործման ուղղությամբ առաջին հերթին կիրականացվեն Արցախի Հանրապետության 2017 թվականի հուլիսի 21-ի դատական օրենսգրքից բխող անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտերի մշակման աշխատանքներ: Նախատեսվում է համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում, որոնք պայմանավորված են ինչպես Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, այնպես էլ դատական օրենսգրքով ամրագրված դատական իշխանության գործունեությանը և կազմակերպմանը վերաբերող հիմնադրույթներով:

Անվճար իրավական տեղեկատվական համակարգում (www.arlexis.am) պարբերաբար կատարվելու է նոր ընդունված օրենսդրական ակտերի և 2005-2017 թթ. մոտ 1600 գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի մուտքագրում և ինկորպորացիա: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության հետ համագործակցության շնորհիվ նախատեսվում է համակարգում իրականացնել ծրագրային և տեխնիկական ապահովման այլ աշխատանքներ:

Վերոնշյալ աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ և իրականացնել անհրաժեշտ աշխատանքներ www.arlexis.am իրավական տեղեկատվական համակարգը նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման միասնական կայք դարձնելու ուղղությամբ:

ՔԿԱԳ և նոտարիատի ոլորտում ժամանակակից զարգացումները, նոր Սահմանադրության ընդունմամբ պայմանավորված, միտված են պետական կառավարումը դարձնելու ավելի ճկուն, արդյունավետ և մարդակենտրոն:

Ինչպես ցանկացած պետական կառավարման ոլորտ, այնպես էլ ՔԿԱԳ և նոտարիատի ոլորտը կարիք ունեն պարբերական նորամուծությունների, նոր մեխանիզմների ու տեխնոլոգիաների ներմուծման:

Նախատեսվում է արդիականացնել քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի ոլորտի օրենսդրությունը, ավարտին հասցնել քաղաքացիական կացության ակտերի թղթային արխիվի թվայնացման աշխատանքները:

Քաղաքացիների սպասարկման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծման համար կսահմանվեն նամակներին, էլեկտրոնային հարցումներին պատասխանելու հստակ ժամկետներ:

Ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքների և լիազորագրերի տրամադրումը կիրականացվի նոր ձևաթղթերով, ինչը կբացառի կեղծիքներ կատարելը:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում նախատեսվում է 2018 թվականի տարեվերջին ավարտին հասցնել էլեկտրոնային եղանակով՝ e-register.am կայքում, իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումներն ու հաշվառումները, նախկինում գրանցված /հաշվառված/ սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների տեղադրման աշխատանքները:

Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում նախատեսվում է բարելավել դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը, մասնավորապես, առավել հստակեցնել դատական ակտերի հարկադիր կատարման ժամկետները, նվազեցնել հարկադիր կատարողի հայեցողական լիազորությունները: Այս կապակցությամբ նախատեսվում է դատական ակտերի հարկադիր կատարման

համակարգում կատարել համապատասխան ուսումնասիրություն և վերհանել հարկադիր կատարման գործընթացում առկա հնարավոր կոռուպցիոն ռիսկերը, իրավական բացերը և առկա այնպիսի իրավական կարգավորումները, որոնք իրենց բովանդակային անհստակության, անորոշության, թերի կամ ոչ լիարժեք լինելու պատճառով հարկադիր կատարողներին հնարավորություն են տալիս կիրառել հայեցողական բնույթի լիազորություններ:

Համապատասխան բարեփոխումների իրականացման արդյունքում նախատեսվում է առավել հստակեցնել դատական ակտերի հարկադիր կատարողի իրավական կարգավիճակը՝ հնարավորինս նվազեցնելով, իսկ հնարավորության դեպքում՝ իսպառ բացառելով հարկադիր կատարողի հայեցողական լիազորությունների շրջանակները: Բացի դրանից՝ բացահայտված իրավական խնդիրների հաղթահարմանն ուղղված նոր իրավական լուծումներով դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը կդառնա առավել հստակ՝ նպաստելով անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ դատական պաշտպանության ապահովմանը: Աշխատանքներ կիրականացվեն դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից էլեկտրոնային եղանակով հարցումների կատարման համակարգերի զարգացման ուղղությամբ:

1.4 . Անվտանգություն և հասարակական կարգ

Անվտանգության և հասարակական կարգի պահպանման ոլորտներում ծրագրի կիզակետը կլինի հասարակության յուրաքանչյուր անդամի պաշտպանվածության մակարդակի բարձրացումը: Արցախի քաղաքացիները պետք է զգան, որ իրենք ապրում են պաշտպանված, ապահով և անվտանգ երկրում, ինչը մարդկային կապիտալի զարգացման կարևորագույն պայման է:

Հասարակական հարաբերությունների զարգացման արդի մակարդակը և հակաիրավական երևույթներին հակազդելու հասարակության ավանդաբար մեծ սպասելիքները իրավապահ մարմիններից՝ հարկադրում են ունենալ այնպիսի կառույցներ, որոնք ունակ կլինեն հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու մարդուն ու հասարակությանը, իրենց գործունեությամբ համապատասխանելու ժողովրդավարական արժեքային համակարգին:

Իրավապահ մարմինների գործողություններն առաջին հերթին ուղղված կլինեն ազգային անվտանգությանն սպառնացող առկա և հավանական ռազմաքաղաքական սպառնալիքների բացահայտմանն ու չեզոքացմանը, տարածաշրջանում կայունության պահպանմանը:

Դատախազության, ազգային անվտանգության և ոստիկանության մարմինների գործունեությունն այսուհետ ևս կնպատակաուղղվի անձ-իրավապահ մարմին

հարաբերությունում անձանց իրավունքների և ազատությունների լիարժեք ապահովմանը:

Անվտանգության և հասարակական կարգի պահպանման ոլորտում առաջիկա երեք տարիների գործունեության հիմնական նպատակները կշարունակեն մնալ՝

- 1) սահմանադրական կարգի պահպանումը.
- 2) քաղաքացու իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը, ազգային անվտանգության ապահովումը.
- 3) պետական սահմանների պաշտպանությունը.
- 4) հասարակության և պետության շահերի պաշտպանությունը.
- 5) հանցագործությունների կանխարգելումը, հասարակական կարգի ու անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը.
- 6) բացասական երևույթների դեմ պայքարի ուժեղացումը և իրավախախտումների նախականիմանն ուղղությամբ իրավապահ մարմինների աշխատանքի կատարելագործումը.
- 7) դատաիրավական բարեփոխումների շարունակականության ապահովումը:
Իրավապահ մարմինների գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով կարևորվում է կառույցների շարունակական հազեցումը ժամանակակից նյութատեխնիկական միջոցներով:

1.5. Արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկերի նվազեցում

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու բնական և մարդածին աղետների ռիսկի նվազեցմանը, հնարավոր հետևանքների կանխարգելմանը և վերացմանը՝ հանդիսանալով պետության անվտանգության ապահովման բաղկացուցիչ տարր և նպաստելով երկրի կայուն զարգացմանը:

Առաջիկա տարիների ընթացքում առաջնահերթ են լինելու՝

- 1) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտների օրենսդրական դաշտի կատարելագործումը.
- 2) քաղաքացիական պաշտպանության կապի և ազդարարման համակարգի կատարելագործումը՝ կապի միջոցների և բնակչության ազդարարման ավտոմատացված համակարգերի ձեռքբերումն ու տեղադրումը.
- 3) Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, արտակարգ իրավիճակների հանձնաժողովների, տարահանման հանձնաժողովների, քաղաքացիական պաշտպանության շտաբների և քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պատրաստության շարունակական կազմակերպումն ու ապահովումը.

4) արտակարգ իրավիճակներում և ռազմական գործողությունների ժամանակ բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների և ծրագրերի շարունակական իրականացումը՝ մասնավորապես պաշտպանական կառույցների վերանորոգման, անհատական պաշտպանության ժամանակակից միջոցների ձեռքբերման աշխատանքների նպատակային իրականացումը.

5) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և այլ երկրների գործընկեր կառույցների հետ առկա կապերի խորացումն ու ընդլայնումը՝ մասնավորապես Մարտակերտ-Վարդենիս մայրուղու վտանգավոր հատվածների, հանրապետության տարածքում առկա ջրամբարների կայունությանն ուղղված ուսումնասիրությունների և գործնական միջոցառումների իրականացումն ու կազմակերպումը.

6) հանրապետության տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության պլանում ճշտումների իրականացումն ու պրակտիկ փորձարկումը.

7) հակակարկտային պաշտպանության համակարգի զարգացումը և այդ ոլորտում արտասահմանյան փորձի ուսումնասիրումը, փոխլրացնող համակարգի ու նորագույն տեխնոլոգիաների ներդրումը.

8) փրկարարական և հրշեջ-փրկարարական ուժերի կարողությունների զարգացումը, այդ թվում՝ տեխնիկական վերազինման ճանապարհով:

1.6. Պետություն-եկեղեցի կապերի հետագա խորացում

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես մեր անկախ պետականության հիմնասյուններից մեկը, անգնահատելի դերակատարություն ունի հայ ժողովրդի գոյատևման եւ զարգացման գործում:

Պետությունը կշարունակի աջակցել պետություն-եկեղեցի կապերի հետագա խորացմանը, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի հետ փոխգործակցության ընդլայնմանը, ազգային արժեհամակարգի ամրապնդմանը:

2. Արտաքին քաղաքականությունն ու պաշտպանությունը

2.1. Արտաքին քաղաքականություն

2017-2020 թթ. որպես արտաքին քաղաքականության ոլորտի գերակա ուղղություններ կշարունակեն մնալ Արցախի Հանրապետության անկախության միջազգային ճանաչումը և ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության խաղաղ կարգավորումը:

Արցախի անկախությունն ու անվտանգությունը բացառիկ արժեքներ են, որոնք ենթակա չեն սակարկության: Ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության կարգավորման գործընթացում իրական առաջընթացի ապահովման և հիմնախնդրի համապարփակ ու վերջնական կարգավորման համար պարտադիր պայման է ԵԱՀԿ

Մինսկի խմբի հովանու ներքո ընթացող բանակցությունների բոլոր փուլերին՝ կարգավորման փիլիսոփայության շուրջ կարծիքների փոխանակումից մինչև կոնկրետ քայլերի և պայմանավորվածությունների մշակումն ու իրագործումը, Արցախի անմիջական և ուղղակի մասնակցության վերականգնումը: Ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության կարգավորման հիմք պետք է հանդիսանա Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման փաստը և դրա արդյունքների ճանաչումը:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համակարգված և հետևողական աշխատանք կտարվի Արցախի ճանաչման ուղղությամբ առկա դրական միտումներն ամրապնդելու և զարգացնելու, ինչպես նաև Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգային հարցերի լուծման ուղղությամբ:

Կշարունակվեն ջանքերը տարբեր աշխարհամասերում օրենսդիր մարմինների կողմից Արցախի ինքնորոշման իրավունքը և անկախությունը սատարող բանաձևերի ընդունման, Արցախի Հանրապետության հետ բարեկամության ձևաչափերի ընդլայնման և նրանց հետ համագործակցությանը գործնական բնույթ հաղորդելու ուղղությամբ: Այդ նպատակին կծառայեն նաև խորհրդարանական դիվանագիտության հնարավորությունները:

Քայլեր կձեռնարկվեն արտասահմանյան տարբեր երկրների և Արցախի համայնքների միջև ապակենտրոնացված համագործակցության միջոցով բարեկամական հարաբերությունների ու փոխգործակցության հաստատմանը շարունակական բնույթ հաղորդելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա տարաբնույթ ծրագրեր իրականացնել մշակույթի, կրթության, սպորտի, առևտրի և տեղական ինքնակառավարման ոլորտներում:

Արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից են Արցախի անվտանգության ապահովումը, տարածաշրջանում որպես խաղաղության և կայունության գործոն Արցախի դիրքերի ամրապնդումը, այլ երկրների և տարածաշրջանային կազմակերպությունների հետ կապերի հաստատումը, ընդհանուր շահերի ու համաձայնությունների որոնումը: Հակառակորդին զսպելու ռազմական և ռազմատեխնիկական մեխանիզմների կատարելագործման ճանապարհով երկրի ռազմական անվտանգության ամրապնդմանը զուգահեռ մեծ ուշադրություն կհատկացվի զսպման քաղաքական-դիվանագիտական միջոցներին:

Առաջնորդվելով Արցախի արտաքին քաղաքականության հիմքում ընկած հավասարակշռվածության և բազմաուղղվածության սկզբունքներով՝ հանրապետությունը կձգտի հարաբերություններ պահպանել և զարգացնել բոլոր երկրների հետ՝ առաջնություն տալով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ և տարածաշրջանում ներկայացված պետություններին:

Հետևողական աշխատանք կտարվի միջազգային և տարածաշրջանային գործընթացներում Արցախի ներգրավվածության ապահովման ուղղությամբ: Արտաքին քաղաքականության ոլորտի կարևոր ուղղություն կմնա արտերկրում

Արցախի քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև՝ Ադրբեջանական ԽՍՀ-ից բռնագաղթած հայազգի քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը: Մասնավորապես, միջոցներ կձեռնարկվեն ապահովելու Արցախի պետական մարմինների արագ արձագանքումը արտաքին գործերի նախարարության խողովակներով արտերկրից եկող քաղաքացիների դիմումներին:

Կշարունակվի աշխատանքը միջազգային ասպարեզում Արցախի դրական վարկանիշի ձևավորման, արտաքին քաղաքական առաջնահերթությունների, Արցախում պետականաշինության գործընթացի, հակամարտության էության և կարգավորման արդի զարգացումների վերաբերյալ օբյեկտիվ և հավաստի տեղեկատվություն տարածելու ուղղությամբ: Աշխատանքներ կտարվեն տեղեկատվական քաղաքականության ընդհանուր ռազմավարության մշակման ուղղությամբ՝ տեղեկատվական դաշտում ամենօրյա համակարգված և ավելի նպատակային գործունեություն ծավալելու, ինչպես նաև պատրաստի գործիքակազմ ապահովելու՝ ճգնաժամային տարբեր հրատապության իրավիճակներում աշխատելու համար:

Տեղեկատվական աշխատանքներում կօգտագործվեն գործող և նոր տեղեկատվական ռեսուրսները, ինչպես նաև Սփյուռքի հայկական և օտարալեզու զանգվածային լրատվամիջոցների հնարավորությունները:

Այս նպատակին կծառայեն նաև ժողովրդական դիվանագիտության հնարավորությունները, ինչպես նաև արտերկրում Արցախի պատմամշակութային ժառանգությունն ու արժեքները ներկայացնող միջոցառումների կազմակերպումը:

Կարևորելով արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչը՝ աշխատանքներ կտարվեն արտաքին աշխարհի հետ տնտեսական կապերի հաստատման, Արցախի զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ստեղծման և ներդրումների խրախուսման ուղղությամբ: Մասնավորապես, արտերկրի գործարար շրջանակներին կներկայացվեն Արցախի տնտեսական, սոցիալական ծրագրերը, հարկային բարենպաստ դաշտը և ներդրումային հնարավորությունները՝ հիմք ունենալով Արցախի Հանրապետության համապատասխան կառուցների կողմից մշակված բիզնես ծրագրերը:

Ուշադրության կենտրոնում կլինեն Արցախում զբոսաշրջության զարգացման խնդիրները: Մասնավորապես, միջոցներ կձեռնարկվեն միջազգային զբոսաշրջային միջոցառումներին Արցախի մասնակցության ապահովման ուղղությամբ:

Արտաքին քաղաքական օրակարգի կարևորագույն խնդիրներից է Հայաստան-Արցախ-Սփյուռք համագործակցության հետագա ընդլայնումն ու զարգացումը, մասնավորապես, արտաքին քաղաքական օրակարգային խնդիրների իրագործման շուրջ:

Սփյուռքի հետ համագործակցության շրջանակներում ուշադրության կենտրոնում կլինեն նաև հայապահպանության խնդիրները: Այդ նպատակով, մասնավորապես, աջակցություն կցուցաբերվի երիտասարդական համատեղ

նախաձեռնությունների իրականացմանը, ուսումնական ծրագրերի, փոխադարձ այցերի կազմակերպմանը:

Կշարունակվի օժանդակությունը հայրենադարձության ծրագրերի ընդարձակմանը, միջոցներ կձեռնարկվեն հայրենադարձների իրավական կարգավիճակի հետ կապված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

Շարունակվելու է համագործակցությունը Արցախում գործող միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ, մասնավորապես՝

1) ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի հետ՝ հրադարարի ռեժիմի պահպանման, վստահության ամրապնդման միջոցների կիրառման և այլ գործառնությունների իրականացման.

2) Կարմիր խաչի միջազգային կոմիտեի առաքելության և մարդասիրական գործունեություն իրականացնող այլ կազմակերպությունների հետ՝ հետևողական փոխադարձ վերականգնման, մասնավորապես, Արցախի տարածքի ականազերծման և մարդասիրական բնույթի այլ ծրագրերի իրագործման հարցերում:

Աշխատանք կտարվի օտարերկրյա կազմակերպությունների և հիմնադրամների հետ՝ Արցախում զարգացման ծրագրեր իրականացնելու նպատակով: Օժանդակություն կցուցաբերվի միջազգային և Արցախի ոչ կառավարական կազմակերպություններին, որոնք խաղաղարար, մարդասիրական, տեղեկատվական և այլ բնույթի ծրագրեր են իրականացնում Արցախում:

Հետևողական աշխատանք կտարվի արտերկրում և միջազգային կազմակերպություններում Արցախի մշտական ներկայացուցչությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Ուշադրության կենտրոնում կլինի դիվանագիտական անձնակազմը ՀՀ-ում ու արտերկրում վերապատրաստելու հարցը:

2.2. Պաշտպանություն

Արցախի Հանրապետության պաշտպանության ոլորտը պետք է ապահովի Արցախի Հանրապետության անկախությունը, ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը, բնակչության անվտանգությունը, ռազմական բնույթի առկա և հավանական սպառնալիքների ժամանակին բացահայտումը, գնահատումը, կանխումը, կասեցումն ու չեզոքացումը:

Արցախի անվտանգության հանդեպ ամենօրյա ռոտնձգությունները, լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսման անմիջական սպառնալիքներն ու դրանց իրականացման գործնական քայլերը մեզ այլընտրանք չեն թողնում, քան անընդհատ և հետևողականորեն բարձրացնել մեր երկրի անվտանգության մակարդակը, ինչը հանդիսանում է Արցախի Հանրապետության առաջնահերթ նպատակներից մեկը:

Պաշտպանության բնագավառում առաջիկա երեք տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու գերատեսչության՝

1) ներուժի և կարողությունների շարունակական, ներդաշնակ ու հավասարակշռված աճի ապահովմանը.

2) ժամանակակից մարտական գործողությունների վարման և կրակային խոցման կարողությունների որակական վերազինման համար անհրաժեշտ սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և հատուկ միջոցներով համալրմանը.

3) գործունեությունը, գործառույթները և գործընթացներն ավելի արդյունավետ, գործուն և նպատակային դարձնելուն.

4) մարտական հերթապահության համակարգի կատարելագործմանը, անհրաժեշտ տեսադիտարկման և հետախուզական համակարգերով համալրմանը, մարտական դիրքերի ինժեներական կահավորմանը, սպայական և շարքային կազմի հատուկ պատրաստության ծրագրերի միջոցով մարտական հերթապահության մեջ ընդգրկված անձնակազմի անվտանգության բարձրացմանը, ցանկացած ոտնձգության ժամանակին բացահայտման, կանխման և խոցման հնարավորությունների ընդլայնմանը.

5) զինվորական ծառայության գրավչության բարձրացմանը.

6) Արցախի Հանրապետության պաշտպանությանը յուրաքանչյուր զինապարտ քաղաքացու մասնակցության ապահովմանը՝ գորակոչային համակարգում արդարության սկզբունքի ամրապնդմամբ.

7) զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, զինվորական հաշմանդամների, զոհված (մահացած), անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամների սոցիալական արտոնությունների ու երաշխիքների համակարգի ընդլայնմանը:

3. Տնտեսական ոլորտը

3.1 . Տնտեսության առաջընթաց, գործարար միջավայր և փոքր ու միջին ձեռնարկատիրություն

Առկա մարտահրավերների և տնտեսական պայմանների ամբողջությունը՝ կանխորոշում է տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը՝ տնտեսական աճի ապահովմամբ կայուն տնտեսական զարգացում, հիմքում դնելով.

1) աշխատանքի արտադրողականության և այլ ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը.

2) ներմուծման փոխարինումն ու ոչ հումքային արտահանման ընդլայնումը խթանող ծրագրերի իրականացումը.

3) զբաղվածության մակարդակի բարձրացումը և դրա կառուցվածքի փոփոխությունը՝ հօգուտ մասնավոր հատվածի:

2017-2020թթ. իրականացվող տնտեսական քաղաքականության կարևոր նպատակներից կլինի հանրապետության տնտեսության առանձին ոլորտների փոխկապակցվածության այնպիսի մակարդակի ապահովումը, որը կտա մաքսիմալ

սիներգետիկ էֆեկտ:

Արցախի տնտեսական աճի և տնտեսական մրցունակության ապահովման գործում բարձր է բարենպաստ գործարար միջավայրի դերը, և օրվա հրամայականն է գործարար միջավայրը դարձնել երկրի մրցակցային առավելություններից մեկը:

Արցախի գործարար միջավայրի բարեփոխումներով կկրճատվեն բիզնես-սուբյեկտների պետական և համայնքային մարմինների հետ շփման վարչարարական բեռը և ժամանակային ծախսումները, կբարձրացվի գործարարներին ծառայություններ մատուցող մարմինների գործունեության թափանցիկությունը:

Նշված խնդիրների արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ են.

1) տնտեսական ակտիվություն, տնտեսավարողների մրցակցությունը սահմանափակող իրավանորմերի մշտադիտանցում և վերհանված խոչընդոտների վերացման ուղղությամբ միջոցառումների իրականացում, տնտեսավարողների համար կանխատեսելի և ընկալելի տնտեսական միջավայրի ստեղծում.

2) վերահսկողական համակարգի կատարելագործում, որը ենթադրում է ձեռնարկատիրական գործունեության վարչական սահմանափակումների կրճատում, վերահսկողական մարմինների իրավասությունների արդյունավետ կանոնակարգման ապահովում և պետական վերահսկողության ընթացքում տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության երաշխիքների բարձրացում.

3) պետական կառավարման համակարգում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ակտիվացում և պետության կողմից բիզնես-սուբյեկտներին մատուցվող ծառայությունների էլեկտրոնայնացում.

4) գործարար համայնքի ներկայացուցիչների հետ առավել արդյունավետ համագործակցության ինստիտուցիոնալ հարթակի ձևավորում, տնտեսության կարգավորման հետ կապված պետական մարմինների որոշումների նախապատրաստմանը գործարար համայնքի մասնակցության ընդլայնում.

5) գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու համար նախատեսված թույլտվությունների և լիցենզիաների ցանկի կրճատում ու տրամադրման գործընթացների առավելագույն պարզեցում.

6) առևտրային վեճերի դատական լուծման և կիրարկման վրա ծախսվող ժամանակի և ընթացակարգերի կրճատում.

7) կորպորատիվ կառավարման մշակույթի ներդրման ու զարգացման խթանում:

Կայուն երկարաժամկետ զարգացման խնդրի լուծման կարևորագույն պայմաններից մեկն է գերակա ոլորտներում արագացված տեխնոլոգիական զարգացումը, որի հետագա ընթացքը մեծապես պայմանավորված է ներդրումային նպատակաուղղված քաղաքականությամբ և դրա արդյունավետ իրականացմամբ:

Նշված քաղաքականության հիմնական ուղղությունները կլինեն.

1) ներդրումային ծրագրերին աջակցող պետական կամ պետության

մասնակցությամբ կառույցների օպտիմալացումը և գործունեության արդյունավետության բարձրացումը.

2) խոշոր ներդրումային ծրագրերի ընթացքի պարբերական մշտադիտանցումը և դրանց իրականացմանը խոչընդոտող խնդիրների վերհանումն ու կարգավորումը.

3) դիվանագիտական կորպուսի՝ ներդրումների ներգրավման գործում դերակատարման ավելացումը.

4) գործող ձեռնարկությունների տեխնիկական վերազինման խթանման նպատակով տեխնոլոգիական սարքավորումների լիզինգի համակարգի զարգացումը, պետական աջակցության մեխանիզմների ներդրումը.

5) տնտեսության, ինչպես նաև առանձին ոլորտների իրավիճակային ուսումնասիրումն ու մրցակցային առավելությունների երևան հանումը և դրանց հիման վրա ներդրումային թիրախային ծրագրերի մշակումն ու առաջնորդումը:

Արտահանման խթանման քաղաքականությունը կիրականացվի ինչպես բարենպաստ միջավայրի ստեղծմանն ուղղված ընդհանրական միջոցառումների, այնպես էլ հատուկ գործիքակազմի կիրառմամբ, ընդ որում՝ կառանձնացվեն արտահանման գերակա ոլորտները, որոնց ուղղությամբ կկենտրոնացվեն պետության ռեսուրսներն ու ջանքերը: Տնտեսավարողների հետ անընդհատ շփումների միջոցով ակտիվ քաղաքականություն կիրականացվի հետևյալ ուղղություններով՝

1) արտահանման շուկաների հասանելիությունն ընդլայնելու նպատակով ցուցահանդեսներին և տոնավաճառներին մասնակցության աջակցման հարցում առավել արդյունավետ մեխանիզմների ներդրում.

2) արտահանող արտադրողների և նրանց արտադրանքի վերաբերյալ տվյալների էլեկտրոնային հարթակներում ընդգրկվածության ապահովում.

3) մասնագիտացված արտահանող կառույցների (այդ թվում՝ լոգիստիկ ընկերությունների) ձևավորմանը և հզորացմանն ուղղված աջակցության մեխանիզմների ներդրում ու կիրառում.

4) արցախյան արտադրողների տնտեսական գործունեության և, մասնավորապես, արտադրանքի արտահանման կազմակերպման վրա քաղաքական գործոնների բացասական ազդեցության մաքսիմալ չեզոքացում.

5) դիվանագիտական կորպուսի՝ արցախյան արտադրանքի արտահանման գործում դերակատարման ավելացում.

6) արտաքին շուկաներում խոչընդոտների վերացման նպատակով որակի վերահսկման գործող համակարգի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցում:

Փոքր և միջին ձեռնարկատիրություն

Տնտեսական քաղաքականության համատեքստում շարունակաբար կկարևորվի

փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը՝ որպես տնտեսության նորարարական ուղղվածության և ճկունության ապահովման երաշխիք:

Կուժեղացվի զարգացման ինստիտուտների՝ Արցախի ներդրումային հիմնադրամի ու Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի գործիքակազմը ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական, ենթակառուցվածքային, գույքային, իրավաբանական, մեթոդաբանական և այլ տեսակի աջակցության հարցերում: Բացի դրանից՝ աշխատանքներ կտարվեն նաև հետևյալ ուղղություններով.

1) ՓՄՁ զարգացման քաղաքականության առավել արդյունավետ և հասցեական իրականացման նպատակով ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների վերանայում.

2) ՓՄՁ սուբյեկտների համար որոշակի ժամկետով սահմանել պլանային ստուգումների մոնիթորինգ (ստուգումներից որոշակի ժամկետով ազատում).

3) նորաստեղծ ՓՄՁ սուբյեկտների գործունեության համար անհրաժեշտ տարածքների հասանելիության բարձրացում՝ տնտեսական շրջանառության մեջ դնելով պետական և համայնքային սեփականություն հանդիսացող չօգտագործվող գույքը,

4) ՓՄՁ սուբյեկտների համար հաշվետվողական համակարգի պարզեցում և կրճատում.

5) պետական մարմինների և պետական մասնակցությամբ կազմակերպությունների համար ընդհանուր գնումներում ՓՄՁ սուբյեկտ հանդիսացող տեղական արտադրողներից ձեռք բերված ապրանքների մասնաբաժնի նվազագույն շեմի սահմանում.

6) արտադրական գործունեության հետ անմիջականորեն չկապված ծախսերի (վարչական ծախսեր, ենթակառուցվածքների ստեղծմանն ուղղված ծախսեր) նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ արդյունաբերական համալիրների և ինովացիոն կլաստերների, բիզնես ինկուբատորների ստեղծման շնորհիվ.

7) Արցախի Հանրապետության տնտեսության բոլոր ճյուղերում SS-ի լուծումների, մասնավորապես, տեղական SS-ի մրցունակ արդյունքի կիրառման խթանում.

8) Ժամանակակից ինովացիոն ենթակառուցվածքներով հագեցած Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի արդյունավետ գործունեության ապահովում:

3.2 . Հարկաբյուջետային քաղաքականություն

Բյուջետային քաղաքականություն

Բյուջետային քաղաքականությունն առաջիկա տարիներին միտված կլինի տնտեսական աճի խթանմանը և տնտեսությունում աճի ներուժի աստիճանական բարձրացմանը: Հասարակության բարեկեցության, սոցիալական խնդիրների լավագույնս լուծման գրավականը կայուն տնտեսական աճ ունենալն է՝ դրա ստեղծմանը մասնակցողների և դրանից օգտվողների թվի մշտապես աճի պայմաններում:

Պետական ֆինանսները նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործելու համար Արցախի Հանրապետությունում առաջիկա տարիներին նախատեսվում է թիրախավորել պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի քանակական և որակական արդյունքների գնահատումը, ինչպես նաև ուժեղացնել ֆինանսական կարգապահությունը: Այդ առումով, առաջիկա տարիներին կամբողջականացվի ծրագրային բյուջետավորման ներդրման մեթոդաբանական հենքը, կբարձրացվի պետական ֆինանսների կառավարման գործառնությունների ավտոմատացման մակարդակը, կընդլայնվի պետական գնումների ոլորտում մատուցվող էլեկտրոնային ծառայությունների շրջանակը, ինչպես նաև կուժեղացվեն պետական ֆինանսական հսկողության համակարգերը:

Մրցունակ և երկարաժամկետ կայուն աճ ապահովող ձեռնարկատիրության կարևոր նախապայմաններից է թափանցիկ և հաշվետվողականության սկզբունքների վրա հիմնված գործունեության վարումը: Որակյալ աուդիտը պետք է դառնա մրցունակ ձեռնարկատիրության գործունեության պահանջված նորմ՝ աուդիտորական ծառայությունների որակի հսկման գործուն համակարգի ստեղծման առկայության պայմաններում:

Հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվառման կազմակերպումը և վարումը, ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու միասնական հիմունքների ապահովումը, հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառմանը վերաբերող հիմնական և այլ հարաբերությունների կարգավորումը պահանջում է միջազգային չափանիշներին համապատասխանող նոր համակարգի առկայություն: Այս նպատակին հասնելու համար կներդրվի հաշվեգրման սկզբունքի հիման վրա հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգ:

Հեռանկարային կայուն տնտեսական աճ ապահովելու տեսանկյունից էական է ֆինանսական շուկաների զարգացվածությունն ու խորությունը, որը հնարավորություն կտա առավել բազմազան դարձնելու և զարգացնելու ֆինանսական գործիքները՝ միաժամանակ ֆինանսական ռեսուրսներն ավելի հասանելի դարձնելով ներդրումների համար: Վերը նշված նպատակներին հասնելու համար աշխատանքներ կիրականացվեն հետևյալ ուղղություններով՝

1. Տնտեսական աճի ներուժի բարձրացման և մակրոտնտեսական կայունության ապահովման նպատակով կնախագծվի բյուջետային շրջանակ միջնաժամկետ ժամանակահատվածի համար, որը կնախատեսի կապիտալ ծախսերի աստիճանական ավելացում՝ հնարավորինս չափավորելով ընթացիկ ծախսերը և առավելապես կարևորելով

դրանց արդյունավետությունը սոցիալական կարիքների ապահովման տեսակետից խնդիրներ չառաջացնելու նպատակադրմամբ:

2. Մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման և արտաքին աուդիտորական գործունեության ոլորտներում նախատեսվում է մշակել օրենսդրական փաթեթ՝ ուղղված հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտների բարեփոխմանը:

3. Պետական ֆինանսական կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է՝

1) պետական գնումների ոլորտում արդյունավետության և թափանցիկության մակարդակի, ինչպես նաև մրցակցության բարձրացման նպատակով ընդլայնել պետական գնումների ոլորտում մատուցվող էլեկտրոնային ծառայությունների շրջանակը.

2) բյուջետային գործընթացներում պետական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործման և հանրային հաշվետվողականության տեսանկյունից արդյունավետ գործիքակազմի ներդրման նպատակով իրականացնել աշխատանքներ ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ.

3) պետական և համայնքների բյուջեների կատարման գործընթացի կազմակերպման և նախնական հսկողության առավել արդյունավետ կազմակերպման նպատակով շարունակել գանձապետական համակարգի արդիականացմանն ու օպտիմալացմանն ուղղված աշխատանքները.

4) ապահովել հանրային հատվածի՝ հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի ներդրումը, որը հնարավորություն կընձեռի ստանալ պետական մարմինների առանձին և համախմբված ֆինանսական հաշվետվությունները և հուսալի ու արժանահավատ տեղեկատվություն պետության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ, մասնավորապես՝

ա. մինչև 2021 թվականը ավարտել հանրային հատվածի կազմակերպությունների աստիճանաբար անցումը հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգին՝ հետևյալ հաջորդականությամբ.

1. 2018 թ. հունվարի 1-ից՝ պետական կառավարման մարմիններ,
2. 2019 թ. հունվարի 1-ից՝ տարածքային կառավարման մարմիններ,
3. 2020 թ. հունվարի 1-ից՝ տեղական ինքնակառավարման մարմիններ,

բ. մինչև հանրային հատվածի կազմակերպությունների տեղափոխումը հաշվապահական հաշվառման նոր համակարգի՝ կազմակերպել հաշվապահների մասնագիտական վերապատրաստում՝ ծանոթացնելով հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերին և ցուցաբերելով մեթոդական օգնություն գործող համակարգից նոր համակարգին անցնելու ուղղությամբ,

գ. ձևավորել Արցախի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, համախմբված ֆինանսական հաշվետվությունները 2020 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար.

5) բարձրացնել պետական մարմինների բյուջետային կարգապահության ու պատասխանատվության աստիճանը:

4. Կկատարելագործվի և կհամակարգվի Արցախի Հանրապետության քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված հիփոթեքային շուկայի զարգացման ծրագիրը՝ բնակչության համար բարձրացնելով հիփոթեքային վարկերի մատչելիությունը, առանձնակի ուշադրություն դարձնելով գյուղական բնակավայրերին: Աշխատանքներ կիրականացվեն նաև պետական աջակցությամբ տարբեր հիփոթեքային ծրագրերի միասնական համակարգի ներդրման և կոորդինացման ուղղությամբ:

Հարկային համակարգ

Հարկային համակարգը պետք է լինի արդյունավետ և ունենա անհրաժեշտ կարողություններ՝ սովերային տնտեսության կրճատման և գործարար միջավայրի բարելավման համար: Արդյունավետ հարկային վարչարարության իրականացման արդյունքում պետք է ապահովվի հարկային եկամուտների կայունությունը՝ նախատեսելով հարկային եկամուտների շարունակական աճ՝ հաշվի առնելով առաջիկա տարիներին տնտեսության զարգացման միտումները:

Եկամուտների քաղաքականությունը թիրախավորելու է բիզնեսի և ներդրողների համար արդար, ընկալելի և կանխատեսելի միջավայրի ապահովումը՝ հնարավորություն ընձեռնելով առավել արդարացիորեն վերաբաշխել տնտեսությունում ռեսուրսները և նպաստելով կայուն տնտեսական աճին:

Հարկային մարմնի կողմից հետևողական վարչարարության իրականացման արդյունքում պետք է խստացվի պայքարն օրինազանց, հարկային պարտավորությունները կանխամտածված կերպով չկատարելու վարքագիծ դրսևորող հարկ վճարողների նկատմամբ, պետք է շարունակվեն աշխատանքները տնտեսության մեջ կատարվող գործարքների լիարժեք փաստաթղթավորման ուղղությամբ: Այս առումով հիմնական մոտեցումն այն է, որ հարկային հսկողական գործիքները կկիրառվեն բացառապես ոչ բարեխիղճ հարկ վճարողների նկատմամբ, իսկ հարկային մարմնի կողմից իրականացվող ընթացիկ հսկողությունը կտեղափոխվի էլեկտրոնային հսկողության հարթակ:

Գործարար միջավայրի տեսանկյունից կարևորվելու է պետբյուջեի մուտքերի վարչարարության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունքում հարկ վճարողների համար իրականացվող վարչարարության հնարավորինս պարզեցումն ու հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը:

Նշված ուղղություններով աշխատանքների իրականացման, ինչպես նաև հարկային մարմնի գործունեության թափանցիկության ապահովման արդյունքում կբարձրանա վստահությունը հարկային համակարգի նկատմամբ:

Նշված թիրախներին հասնելու նպատակով անհրաժեշտ է հարկային համակարգի բարեփոխումների հստակ ուղղությունների նախանշում, որոնք ճշգրիտ

կերպով կարտացոլեն սահմանված նպատակներին հասնելու եղանակները: Մասնավորապես՝

1. Հարկային քաղաքականության ոլորտում նախատեսվում է բիզնեսի տարբեր ոլորտների, ինչպես նաև գործարարների շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների և պետական գերատեսչությունների ներգրավմամբ մշակել հարկային օրենսգրքի նախագիծը, որի ընդունմամբ կայուն և կանխատեսելի միջավայր կապահովվի ինչպես գործարարների, այնպես էլ հարկային համակարգի համար:

2. Հարկային հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է հսկողական գործընթացները կազմակերպել ռիսկերի գնահատման համակարգերի ներդրման և կատարելագործման միջոցով՝ ստեղծելով ստվերային շրջանառությունների բացահայտման և հարկերը թաքցնելու հնարավորությունների սահմանափակման անհրաժեշտ գործիքակազմ: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում նախատեսվում է՝

1) ըստ նպատակայնության կանոնակարգել հարկային, վարչական և քրեական պատասխանատվության տեսակներն ու չափերը, իրավախախտումների համար պատասխանատվության միջոցներ սահմանել ըստ վտանգավորության աստիճանի և պատճառած վնասի.

2) շարունակական աշխատանքներ իրականացնել տնտեսության մեջ կատարվող գործարքների լիարժեք փաստաթղթավորման ուղղությամբ.

3) առանձնացնել ոլորտային վերլուծությունների իրականացման արդյունքում հարկ վճարողների թիրախային խմբեր, կազմակերպել անհատական խմբային հանդիպումներ, ներկայացնել վերջիններիս գործունեությանն առնչվող ռիսկերը, քննարկել խնդիրները և դրանց արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ հարկային կարգապահության բարձրացման ուղղությամբ միջոցներ չձեռնարկված տնտեսավարող սուբյեկտների մոտ կիրառել հարկային հսկողության վարչարարական անհատական գործիքակազմ.

4) կազմակերպել հարկային հսկողության գործընթաց՝ ռիսկերի գնահատման համակարգերի կատարելագործման միջոցով՝ ապահովելով հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների քանակի և հարկ վճարողների թվի հարաբերակցության հետևողական կրճատում.

5) հարկերի վճարումից խուսափելու դեպքերի բացահայտման և կանխարգելման նպատակով կատարելագործել և ընդլայնել հարկային մարմնին տեղեկությունների տրամադրման և փոխանակման համակարգերը, մասնավորապես, երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների շրջանակի ընդլայնումը և որակի բարելավումը, դրանց փոխանակման և մշակման էլեկտրոնային համակարգերի կատարելագործումը:

3. Հարկային համակարգում իրականացվող վերլուծական և ռիսկերի գնահատման գործընթացների բարելավման, ինչպես նաև հարկ վճարողների գործունեության նկատմամբ իրականացվող ընթացիկ հսկողությունն էլեկտրոնային

հսկողությամբ փոխարինելու նպատակով կկատարելագործվեն և կընդլայնվեն հարկային մարմնի վերլուծական կարողությունները՝ ապահովելով անհրաժեշտ փոխկապակցվածությունը վերլուծական աշխատանքների արդյունքների, ռիսկերի կառավարման համակարգերի և հսկողական միջոցառումների արդյունքների միջև: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում նախատեսվում է՝

1) ընդլայնել կամերալ ուսումնասիրությունների իրականացման էլեկտրոնային համակարգի շրջանակները.

2) կենտրոնացնել հարկային համակարգում իրականացվող վերլուծական աշխատանքները՝ ներդնելով ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համակարգ:

4. Օրինապահ հարկ վճարողների նկատմամբ առավել մեղմ հարկային վարչարարության իրականացման և գործընկերային հարաբերությունների ամրապնդման նպատակով նախատեսվում է գործարկել «Օրինապահ հարկ վճարողներ»-ի համակարգը, ինչը նպատակ ունի զարգացնել հարկերի ինքնուրույն հաշվարկման և վճարման մշակույթը: «Օրինապահ հարկ վճարողներ»-ի ցանկում ընդգրկված հարկ վճարողների նկատմամբ կկիրառվի վստահության վրա հիմնված հարկային վարչարարություն՝ ռիսկերի բացահայտումն իրականացնելով կամերալ ուսումնասիրություններով և վերլուծություններով:

5. Հարկային վարչարարության բարեփոխումների շրջանակում առաջնահերթությունը տրվելու է հարկային մարմնում իրականացվող գործընթացների ավտոմատացմանը, այդ թվում՝ հարկ վճարողներին, ժամանակին համահունչ, որակյալ ծառայությունների մատուցմանը, ինչն էլ իր հերթին կխթանի հարկ վճարողների հարկային պարտավորությունների կամավոր կատարման մակարդակի բարձրացումը: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում նախատեսվում է՝

1) զարգացնել հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգի կարողությունները՝ ընդլայնելով հարկային հաշվետվությունների ու տեղեկությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորությունները.

2) ավտոմատացնել հարկ վճարողների պարտավորությունների հաշվառման գործընթացը, ինչը հնարավորություն կտա բացառել մարդկային գործոնի միջամտությունն ու սխալների հավանականությունը, տնտեսել ժամանակային ռեսուրսները՝ կենտրոնանալով վերլուծական աշխատանքների վրա.

3) ներդնել էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման համակարգը, ինչի արդյունքում էականորեն կբարձրանա տնտեսությունում գործարքների փաստաթղթավորման նկատմամբ հսկողական միջոցառումների արդյունավետությունը՝ զգալի չափով դյուրինացնելով և կրճատելով փաստաթղթաշրջանառությունը.

4) հանրապետության տարածք ներմուծվող և արտահանվող ապրանքանյութական արժեքների հաշվառումն իրականացնել ժամանակակից չափանիշներին համապատասխան՝ կատարելագործելով հաշվառման

գործառույթները.

5) ընդլայնել հարկ վճարողների գործունեության ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ վերջիններիս կողմից ուղարկվող ծանուցումների համակարգի կիրառումը՝ օգտագործելով առավելապես էլեկտրոնային համակարգերի հնարավորությունները:

6. Հարկային վարչարարության բարելավման համալիր միջոցառումների շարքում առանձնակի կարևորվում է հարկային մարմինների գործունեության թափանցիկության ապահովմանն ուղղված լայնածավալ աշխատանքների իրականացումը, տնտեսավարող սուբյեկտների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վերջիններիս իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Իրականացվող աշխատանքները կհանգեցնեն հարկային կարգապահության բարձրացմանը, հարկային մարմնի հանդեպ վստահության մթնոլորտի ձևավորմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկային պարտավորությունների պատշաճ կատարմանը, հարկային եկամուտների ապահովմանը: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում նախատեսվում է՝

1) կատարելագործել հարկ վճարողների սպասարկման միասնական ստանդարտները՝ ապահովելով դրանց հրապարակայնությունը.

2) ձեռնարկել միջոցներ հարկ վճարողների իրազեկման և ուսուցման համակարգի շարունակական կատարելագործման ուղղությամբ.

3) համակարգի գործունեության թափանցիկության ապահովման շրջանակներում՝

ա. հասարակությանը ներգրավել իրականացվող հարկային բարեփոխումների գործընթացներում, այդ թվում՝ պարբերաբար հանդիպումներ, կարծիքների փոխանակումներ կազմակերպել քաղաքացիական հասարակության ինստիտուտների, տնտեսության տարբեր ոլորտների մասնագետների, ինչպես նաև ուսանողության հետ՝ ամրապնդելով հարկերի ինքնուրույն հաշվարկման և վճարման մշակույթը,

բ. հասարակության գնահատականի ստացման նպատակով կազմակերպել հարկային վարչարարության ընթացակարգերի վերաբերյալ հարցումներ՝ ինտերնետային կայքի միջոցով.

4) առանձնակի ուշադրության կենտրոնում պահել հարկային ծառայողի կերպարը՝ ապահովելով հարկային ծառայողին հարիր վարքագիծ: Այս առումով կարևորվում է հարկային ծառայողների մասնագիտական գիտելիքների, աշխատանքային հմտությունների շարունակական զարգացումը, հարկ վճարողների հետ հաղորդակցման կանոններին տիրապետելը և էթիկայի նորմերի ամրապնդումը՝ վերապատրաստումների և այլ դասընթացների կազմակերպման միջոցով:

3.3 . Արտադրական ենթակառուցվածքներ

Արտադրական ենթակառուցվածքների զարգացման ոլորտում պետական քաղաքականության նպատակն է տնտեսության մրցունակության և կենսամակարդակի բարձրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը՝ ներառելով.

- 1) էներգետիկ ենթակառուցվածքների զարգացումը.
- 2) ջրային համակարգերի զարգացումը և արդիականացումը.
- 3) ժամանակակից և արդյունավետ տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացումը.
- 4) SՀS-ի և կապի ոլորտի ենթակառուցվածքների բարելավումն ու դինամիկ զարգացումը:

Ենթակառուցվածքների ոլորտում կներդրվեն պետություն-մասնավոր հատված համագործակցության մեխանիզմները՝ ուղղված ձեռնարկատիրական և ներդրումային ռիսկերի նվազեցմանը:

Էներգետիկ համակարգ

Էներգետիկայի ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, էներգակիրների մատակարարման տարատեսականացման վրա հենվելով՝ էներգետիկ ոլորտի կայուն զարգացմանը:

Ներկայումս էներգահամակարգը գրեթե ամբողջովին բավարարում է էլեկտրաէներգիայի ներքին շուկայի պահանջարկը և արդեն իսկ առկա է էլեկտրաէներգիայի արտահանման որոշակի ներուժ:

2018-2020 թթ. էներգետիկայի ոլորտում նախատեսվում է՝

1) շարունակել բարձրավոլտ և ցածրավոլտ օդային գծերի վերանորոգման, ինչպես նաև տրանսֆորմատորային նոր ենթակայանների կառուցման աշխատանքները՝ ապահովելով ընդլայնվող ծավալներով արտադրվող էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումն ու բաշխումը: Այս ուղղությամբ նախատեսվում է իրականացնել ավելի քան 15 մլրդ դրամի ներդրումներ.

2) իրականացնել միջոցառումներ տնտեսությունում էներգախնայողության մակարդակի բարձրացման ուղղությամբ.

3) մշակել Արցախի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման միջոցառումները և իրականացման ժամկետները՝ նպատակ ունենալով բարձրացնել Արցախի Հանրապետության էներգետիկ անվտանգության պահանջների կատարման արդյունավետությունը.

4) 2017թ. հասնել էլեկտրաէներգիայի արտադրության ինքնաբավության մակարդակի և իրականացնել արտահանում.

5) շարունակել փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման ծրագիրը՝ մինչև 2020 թ. թողարկվող էլեկտրաէներգիայի ծավալը հասցնելով տարեկան 550 մլն կՎտ.ժ-ի, իսկ մինչև 2023 թ.՝ 750 մլն կՎտ.ժ-ի.

6) ներդնել արևային համակարգային կայանների ստեղծման և զարգացման խթաններ.

7) էներգիայի բաշխիչ ցանցում ներդնել կառավարման ավտոմատ համակարգեր:

Ջրային համակարգեր

Խմելու ջրի մատակարարման ուղղությամբ առանձնահատուկ ուշադրություն կդարձվի արդեն իսկ կառուցված ջրամատակարարման արդիական ցանցերի շահագործմանը, ինչպես նաև շուրջօրյա ջրամատակարարում չունեցող բնակավայրերում նոր համակարգերի կառուցմանը: Նպատակադրվում է ավարտին հասցնել 300 և ավելի թվաքանակով բնակչություն ունեցող բնակավայրերում կանոնավոր ջրամատակարարման ապահովմանն ուղղված աշխատանքները:

Նախատեսվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Մարաթոն-2017»-ում հանգանակված գումարներն ուղղել խորքային հորերի և դրանցից սնվող ոռոգման համակարգերի կառուցմանը՝ ջրախնայողական նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ: Դա շարունակական կլինի հետագա տարիներին ևս:

Ոռոգման համակարգերի արդիականացման, ընդլայնման և ոռոգման ենթակա գյուղատնտեսական հողատարածքների ջրապահովվածության ու մատակարարման հուսալիության մակարդակի բարձրացման նպատակով նախատեսվում է մի շարք ծրագրերի իրականացում, այդ թվում՝

1) ջրառ իրականացնող և ջուր տեղափոխող համակարգերի, խորքային հորերի և դրանցից սնվող ոռոգման համակարգերի կառուցում.

2) ջրախնայողական նորագույն տեխնոլոգիաների ներդրում.

3) ոռոգման ջրի կորուստների և համակարգերի շահագործման ծախսերի նվազեցման նպատակով առկա ոռոգման համակարգերի արդիականացում, տեխնիկական վիճակի բարելավում.

4) ոլորտում գործառույթներ իրականացնող ձեռնարկություններին պետական աջակցության ցուցաբերում.

5) կարգավորիչ ու չափորոշիչ սարքերի և սարքավորումների տեղադրում.

6) մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորում.

7) ջրային համակարգերի կառավարման առավել արդյունավետ եղանակների կիրառում.

8) բնական կերտահանողակների (արոտների) ջրարբիացման ծրագրի իրականացում:

Տրանսպորտ և կապ

Տրանսպորտի կայուն և արդյունավետ զարգացումը դիտարկվում է որպես երկրի տնտեսական աճի բարձր տեմպի, ազգային անվտանգության և պաշտպանունակության ապահովման, բնակչության կենսապայմանների բարելավման, ինչպես նաև համաշխարհային տնտեսությանը Արցախի ինտեգրման և մրցունակության անհրաժեշտ պայման: ԱՀ տրանսպորտի ոլորտի քաղաքականությունն ուղղված կլինի հետևյալ նպատակադրումների իրականացմանը՝

- 1) ուղևորների փոխադրման անվտանգության մակարդակի բարձրացում.
- 2) բնակչությանը մատուցվող տրանսպորտային ծառայությունների հասանելիության բարձրացում.

3) տրանսպորտային ծառայությունների մատուցման որակի կատարելագործում:

Վերոնշյալ նպատակների իրականացման երաշխիքը կլինի բնագավառի ներդրումային գրավչության բարձրացումը, որը կհանդիսանա ոլորտում տարվող քաղաքականության գերակա ուղղություններից մեկը:

Արցախի Հանրապետության կապի և հեռահաղորդակցության ոլորտի զարգացման ուղղություններն են՝

1) հեռարձակվող ալիքների ավելացումը, հանրապետության բնակչության համար հեռուստաալիքների առավելագույն հասանելիության ապահովումը, սփռման գործող ցանցի արդիականացումը: Էապես կբարելավվի և կընդլայնվի ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան հեռուստառադիոծրագրերի հեռարձակումը.

2) համաշխարհային արդի չափանիշներին համապատասխանող անխափան և երաշխավորված կապի ծառայությունների մատուցումը.

3) ինտերնետ ազդանշանի թողունակության (արագության) ավելացումը ողջ հանրապետությունում.

4) վստահության, տեղեկատվական անվտանգության, կիբեռանվտանգության և տվյալների պաշտպանության բարձրացման ուղղությամբ համալիր միջոցառումների մշակումը.

5) փոստային կապի ունիվերսալ ծառայությունների հասանելիության և մատչելիության, նոր ծառայությունների, այդ թվում՝ փոստբանկային, էլեկտրոնային-փոստային ծառայությունների ներդրման ապահովումը:

3.4 . Բնապահպանություն և բնօգտագործում

Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և ողջամիտ օգտագործումը ոչ միայն կարևոր նախապայման է մարդու և բնության ներդաշնակ գոյակցության համար, այլև երաշխիք է երկրի կայուն զարգացման սահմանադրական նորմի կիրառման համար, այդ իսկ պատճառով ոլորտում իրականացվող քաղաքականությունը միտված է լինելու՝

1) շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելմանը կամ նվազեցմանը.

2) շրջակա միջավայրի վիճակի վերահսկման, որակի գնահատման, ինչպես նաև կենսամիջավայրի, էկոհամակարգերի և մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանը, ժամանակին հայտնաբերմանն ու վերացմանը:

Բնապահպանության և բնօգտագործման բնագավառում առկա խնդիրների լուծման և ոլորտի պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվելիք ծրագրերն ու միջոցառումները նպատակաուղղվելու են՝

1) բնապահպանական բացասական ազդեցությունների կանխման, նվազեցման, մեղմացման նպատակով փորձաքննության գործընթացի կատարելագործմանը.

2) բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման հատուկ մեխանիզմների ներդրմանը.

3) բնության և շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ վերահսկողության առավել բարձր չափանիշների սահմանմանը, թափոնների տեղադրման և մթնոլորտային օդի պահպանության նկատմամբ պետական վերահսկողական միջոցառումների իրականացմանը, մշտադիտարկումների իրականացմանը.

4) բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ընդլայնմանը, դրանց կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու բնության հատուկ տարածքների զարգացման ազգային ծրագրի ամբողջական իրականացմանը.

5) բնական ռեսուրսների օգտագործման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը.

6) շրջակա միջավայրին հասցված վնասների փոխհատուցման նոր մեխանիզմների ներդրմանը.

7) բնական պաշարների, այդ թվում՝ կենսառեսուրսների հաշվառման, կադաստրների և ռեեստրների ստեղծմանը.

8) անտառային էկոհամակարգերի պահպանությանը, անտառային պաշարների շարունակական ու արդյունավետ օգտագործմանը և անտառների արդյունավետ կառավարման ապահովմանը.

9) անտառի տնտեսական, բնապահպանական և սոցիալական խնդիրները կարգավորող կայուն անտառկառավարմանն ուղղված նոր մեխանիզմների ներդրմանը.

10) օրինական անտառօգտագործումը խթանող և ապօրինի օգտագործումը կանխարգելող տնտեսական մեխանիզմների ներդրմանը.

11) անտառների պահպանության ու պաշտպանության միջոցառումների իրականացմանը, մասնավորապես, մարդածին հրդեհների և արտադրական արտանետումների, թափոնների և այլ բացասական ազդեցությունների կանխարգելմանը.

12) կենդանական աշխարհի պահպանության, վերարտադրության և օգտագործման էֆեկտիվության բարձրացմանը.

13) հասարակության բնապահպանական իրազեկության բարձրացմանը, էկոլոգիական կրթությանն ուղղված ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանման, էկոլոգիական հավասարակշռության վերականգնման, բնապահպանական ոլորտի վերաբերյալ կարևորագույն որոշումների կայացման գործում հասարակության լայն շերտերի և բնապահպանական կազմակերպությունների մասնակցության ապահովմանը:

Բնօգտագործման ոլորտում առանձնահատուկ կարևորություն է տրվելու ընդերքօգտագործման բնագավառին, որը ռազմավարական նշանակություն ունի աշխատատեղերի և տնտեսական ակտիվության ապահովման տեսանկյունից:

Ընդերքօգտագործման բնագավառի հետագա զարգացման, ընդերքի ողջամիտ ու համալիր օգտագործման, ինչպես նաև մասնավոր ներդրումների աճի ապահովման նպատակով իրականացվելու են ծրագրեր ու միջոցառումներ՝ ուղղված.

1) Արցախի Հանրապետության տարածքում ընդերքի ռեսուրսային և տնտեսական ներուժի գնահատմանը.

2) օգտակար հանածոների հանքավայրերի որոնմանը, հետախուզմանն ու գնահատմանը.

3) երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների հավաստիության ապահովման նպատակով լաբորատոր փորձաքննությունների իրականացման համար ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիաների ստեղծմանը:

Բնապահպանության և բնօգտագործման բնագավառներում գլոբալ և տարածաշրջանային խնդիրների լուծումը հնարավոր է միայն համատեղ ուժերով, այդ իսկ պատճառով կիրականացվեն Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության ծրագրեր, այդ թվում՝ մասնագետների ներգրավման և կադրերի վերապատրաստման ուղղությամբ:

3.5 . Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության ոլորտում նախատեսվում է համախառն արտադրանքի ավելացում տարեկան շուրջ 10 տոկոսով, պարենային անվտանգության մակարդակի բարձրացում, ավելի մեծ ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակում, արդիական տեխնոլոգիաների ներդրում, տեղական արտադրանքի ավելացման հաշվին ներմուծման ծավալների նվազեցում և գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում:

1. Երկրագործության ոլորտում նախատեսվում է՝

1) տեղում զարգացնել առաջնային սերմնաբուծությունը, բարձրորակ սերմերով ապահովվածության համար ստեղծել բարենպաստ միջավայր, ընդլայնել սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագիրը.

2) մշակության ագրոտեխնիկական պահանջների ապահովման միջոցով բարձրացնել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և բերքի որակական հատկանիշները.

3) ցանքաշրջանառության պարտադիր կիրառման միջոցով բարելավել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի կառուցվածքը.

4) աջակցության հստակ գործիքների կիրառմամբ խթանել բարձր եկամուտ ապահովող մշակաբույսերի ներդրումը, վերջիններիս մշակության ագրոտեխնիկայի յուրացումը, արդյունքում միավոր տարածությունից ստացվող եկամտի ավելացումը.

5) ապահովել հացահատիկ արտադրող տնտեսությունների ինտենսիվացման մակարդակի և արտադրության արդյունավետության բարձրացումը ու դաշտային կերարտադրության կառուցվածքի բարելավումը, կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ընդլայնումը, համախառն բերքի ավելացումը.

6) գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքի, մշակության, բերքահավաքի, բերքի պահպանության գործընթացում ագրոտեխնիկական միջոցառումների պահանջների կատարման նպատակով ապահովել գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների (սերմեր, հանքային պարարտանյութեր, թունաքիմիկատներ, դիզելային վառելանյութ և այլն) գների և նպատակային վարկերի մատչելիությունը.

7) հանրապետությունում նպաստել գոտիավորման առանձնահատկություններին համապատասխան մշակության և բերքահավաքի առաջադիմական տեխնոլոգիաների ներդրմանը:

2. Բանջարաբուծության ոլորտում նախատեսվում է՝

1) խթանել ավանդական և ոչ ավանդական, տեղական և արտաքին շուկաներում պահանջարկ ունեցող բանջարաբուստանային կուլտուրաների մշակությունը, վերամշակումը, դրանց արտահանումը.

2) նպաստել ջերմոցային տնտեսությունների ստեղծմանը.

3) ընդլայնել ծխախոտագործության ծավալները.

4) նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրերի մասով գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսությունում զբաղված տնտեսավարողներին տրամադրել խորհրդատվական, տեղեկատվական և դրամաշնորհային աջակցություն.

5) միջոցներ ձեռնարկել համայնքներում և բնակավայրերում գյուղացիական տնտեսությունների միավորման, համատեղ մշակության և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման ուղղությամբ:

3. Այգեգործության ոլորտում նախատեսվում է՝

1) խթանել ինտենսիվ այգեգործության զարգացումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նոսան այգիների հիմնադրմանը.

2) իրականացնել այգեգործության աշխարհագրության ընդլայնման քաղաքականություն.

3) իրականացնել մասնագիտացված տնկարանային տնտեսությունների, այգիների հիմնում և ոռոգման ջրախնայողական (կաթիլային և անձրևացման) համակարգերի ներդրում.

4) սահմանել այգեգործության պետական աջակցության հիմնական ձևերը և եղանակները.

5) նպաստել այգեգործության բնագավառում ռիսկերի մեղմացման մեխանիզմների ներդրմանը.

6) ապահովել այգեգործության արտադրանքի բերքատվության աճ՝ հողի բերրիության բարձրացման, տարբեր աշխարհագրական (բնական) գոտիներին համապատասխան պտղատեսակների մշակության, արտադրության առաջավոր տեխնոլոգիաների կիրառման, հողային լայն մելիորացիայի, հակաէրոզիոն միջոցառումների օգտագործման միջոցով.

7) խթանել ավանդական և ոչ ավանդական՝ երկրում ինքնաբավության կարիք ունեցող պտուղների արտադրությունը, հասունացման տարբեր խմբերի պատկանող տեսակների և սորտերի աճեցումը, վերամշակումը, դրանց արտահանումը.

4. Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացման և հավաքակազմի արդիականացման նպատակով անհրաժեշտ է գյուղատնտեսական տեխնիկայի ընդհանուր պարկի թարմացում, որի շրջանակներում նախատեսվում է՝

1) գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերման համար մատչելի նպատակային վարկերի տրամադրում.

2) գյուղատնտեսական տեխնիկայի մատչելի պայմաններով մատակարարման մեխանիզմների, այդ թվում՝ լիզինգային մեխանիզմների ներդրում (լիզինգի կանխավճարի մի մասի սուբսիդավորում, իսկ արժեքի մնացած մասի՝ մարման իրատեսական ժամկետների սահմանում).

3) գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգումն իրականացնելու և պահանջվող պահեստամասերը վարկի տեսքով ձեռք բերելու նպատակով տրամադրել արտոնյալ պայմաններով փոխառություններ.

4) կոոպերատիվ հիմունքներով տեխնիկական միջոցների համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրում և ոլորտում արտադրողականության բարձրացում.

5) մասնագիտական կադրերի պատրաստում, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման տեխնիկական աջակցություն և ուսումնական դասընթացների կազմակերպում:

5. Անասնաբուծության և անասնաբուծության ոլորտի կայունացման և զարգացման համար նախատեսվում է՝

1) իրականացնել անասնաբուծության և անասնաբուծության ոլորտների կանոնակարգում.

2) անասնապահության ճյուղի զարգացման նպատակով իրականացնել գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման և մթերատվության բարձրացման ծրագրեր՝ սելեկցիայի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, այդ թվում՝ գյուղացիական տնտեսություններում կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման համար իրացվող տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորում:

3) կաթի արտադրության ծավալների խթանման և որակական հատկանիշների բարելավման նպատակով աջակցել կաթի հավաքմանը և սառնարանային կետերի ստեղծմանը, արտադրամասերի կառուցմանը:

4) իրականացնել անասնաբուժական կանխարգելիչ և ախտորոշիչ համակարգերի բարելավում, անասնաբուժական սպասարկման մեխանիզմների կատարելագործում:

5) կերահանդակների լիարժեք օգտագործման և կենդանիների շարժի վերահսկման նպատակով իրականացնել անասնագլխաքանակի հաշվառում, համարակալում, արոտների արդյունավետ կառավարում:

6) կենդանիների պահվածքի, կերակուտակման, կերակրման, կերի և մթերքների վերամշակման աշխատանքների մեքենայացման նպատակով աջակցել անհրաժեշտ մեքենաների և սարքավորումների ձեռքբերմանը:

7) խոշոր եղջերավոր կենդանիների շուրջտարյա մսուրային պահվածքի ծախսերի փոխհատուցմամբ աստիճանաբար հրաժարվել ավանդական անասնաբուծությունից:

8) ճյուղի արդյունավետության բարձրացման նպատակով իրականացնել մասնագետների, ֆերմերների վերապատրաստում և միջազգային փորձի փոխանակում:

6. Մանրամթերքի որակի և անվտանգության բարձրացման նպատակով նախատեսվում է՝

1) շարունակել կատարելագործել սննդամթերքի անվտանգության բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտը:

2) մշակել և ներդնել սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի գնահատման մոդել, կիրառել ռիսկերի կառավարման մեխանիզմներ:

3) մշակել և ներդնել սննդամթերք տեղափոխող տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերի տրամադրման մեխանիզմներ:

4) ապահովել կենդանական ծագման սննդի հիգիենայի միջազգային ընդունված պահանջների տեղայնացումը, մասնավորապես, մսի համար անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերում և սպանդանոցային մորթի ենթարկված մսի դրոշմավորման պահանջի կիրառում, մսի իրացման և գնման գործընթացներում պարտադիր սպանդանոցային մորթի փուլային անցում:

5) բարձրացնել սննդամթերքի անվտանգության լաբորատոր հսկողության մակարդակը ու զարգացնել սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների համակարգը:

3.6 . Քաղաքաշինություն

Քաղաքաշինության բնագավառում քաղաքականությունն ուղղված կլինի բնակավայրերի կայուն զարգացման քաղաքաշինական ծրագրերի մշակմանը և իրականացմանը, ազգաբնակչության, արտադրողական ուժերի ու միջոցների տեղաբաշխմանը, ճարտարապետության, բնակարանային-կոմունալ տնտեսության, շինարարության և շինհնդուստրիայի ծրագրերի իրականացմանը: Կկատարելագործվի օրենսդրությունը, կկանխարգելվի ապօրինի և անօրակ շինարարությունը: Առավելագույնս կպարզեցվեն ոլորտին առնչվող ընթացակարգերն ու վարչարարությունը, կհստակեցվի մրցույթների միջոցով օբյեկտների ընտրության ընթացակարգը: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի տարածաշրջանային զարգացման մեջ անհամամասնությունների հաղթահարմանը, Ստեփանակերտում և մյուս բնակավայրերում առողջ, անվտանգ ու հարմար կենսամիջավայրի ստեղծմանը: Այդ նպատակով գործուն միջոցներ կձեռնարկվեն տարածքային հատակագծման և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի լիարժեք բազաների ձևավորման ու վերահսկողության ուղղությամբ:

Ընդգծված ուշադրություն կդարձվի նոր շենքերի և շինությունների ճարտարապետական տեսքին՝ հաշվի առնելով մեր ազգային ոճն ու առանձնահատկությունները:

Կիրականացվի տարածքային պլանավորման ու ճարտարապետության ոլորտում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բազայի ձևավորումը՝ դրանով իսկ նպաստելով բնակավայրի ներդրումային գրավչության բարձրացմանը և ինվեստիցիոն-շինարարական շուկայի ձևավորմանը: Քայլեր կձեռնարկվեն համայնքների գլխավոր հատակագծերի մշակման ուղղությամբ, որոնք կնպաստեն համայնքների հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունների նախանշմանը և համապատասխան ծրագրերի կազմմանն ու իրականացմանը, ինչպես նաև ներդրումային ծրագրերի ներգրավմանը:

Ուշադրության կենտրոնում կլինեն կառույցների սեյսմակայունության և հուսալիության ապահովման խնդիրները՝ սեյսմազինվածության բարձրացմանը նպատակաուղղված ծրագրերի, ինչպես նաև վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսների ու տեխնածին երևույթների ազդեցության նվազեցման, հիմնականում կանխարգելիչ, ինժեներապաշտպանական միջոցառումների ծրագրերի մշակման և իրականացման միջոցով:

Բնակարանային շինարարության ոլորտում մեծ ուշադրություն կդարձվի գյուղական բնակավայրերում նոր բնակելի տների շինարարության վրա՝ գյուղերի հեռանկարային զարգացումը խթանելու և բնակչության արտահոսքը կանխելու նպատակով: Տարվող քաղաքականությունը նպատակաուղղված կլինի գոյություն ունեցող բնակարանային ֆոնդի պահպանման, սպասարկման և շահագործման խնդիրների ապակենտրոնացմանը, պետական անմիջական կառավարման մեխանիզմները և ծառայությունների մատուցումը մասնավորով փոխարինմանը և բազմաբնակարան շենքերի կառավարման համակարգերի ներդրմանն ու զարգացմանը:

Շարունակական բնույթ կկրեն նախադպրոցական հաստատությունների, հանրակրթական դպրոցների, մշակութային և առողջապահական օբյեկտների կառուցման և հիմնանորոգման, ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների պահպանման և շահագործման, ինչպես նաև քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Կշարունակվի պատերազմական գործողություններից տուժած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացումը: Դրա հետ մեկտեղ միջոցներ կձեռնարկվեն սոցիալապես անապահով ընտանիքների, Արցախյան պատերազմում զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ: Հատուկ ուշադրություն կդարձվի բազմազավակության խթանմանը, փախստականների և վերաբնակեցման ծրագրերի իրականացմանը:

3.7 . Պետական գույքի կառավարում

Երկրի տնտեսական զարգացման ապահովման գործում կարևորագույն նշանակություն ունի պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացումը, ինչը ենթադրում է, որ սվյալ ոլորտը պետք է հանդիսանա միասնական տնտեսական քաղաքականության բաղադրիչ մասը:

Պետական գույքի կառավարման ոլորտում կիրականացվի միասնական և շարունակական քաղաքականություն՝ ուղղված հետևյալ նպատակներին.

1. Կառավարման արդյունավետության բարձրացման հիման վրա պետական բյուջեի եկամուտների ավելացում, որը նախատեսում է՝

1) պետական մասնակցությամբ ընկերություններում լիազոր մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացում, նշված ընկերությունների լուծարման դեպքում լուծարումից մնացած գույքի նպատակային օգտագործում, ինչպես նաև սնանկացման ու ֆինանսական առողջացման ծրագրերի հիմնավորում և իրականացում.

2) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների քանակի օպտիմալացում, դրանց գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների բարելավում և մրցունակության բարձրացում.

3) պետության գույքային իրավունքների և շահերի ամբողջական ապահովում, պետական գույքի պահպանման ուղղությամբ վերահսկողության սահմանում և կառավարման գործընթացների մանրամասն իրավական կանոնակարգում:

2. Տնտեսության իրական հատվածում երկարատև կայուն տնտեսական աճ ապահովելու և ներդրումներ ներգրավելու համար պետական ակտիվների արդյունավետ տնօրինում.

1) պետություն-մասնավոր հատված գործընկերության փոխվստահության մթնոլորտի ամրապնդում, համագործակցման խոչընդոտների վերհանում և վերացում, ոլորտում իրականացվող գործառույթների թափանցիկության և գործարար հանրության իրավունքների պաշտպանության ապահովում, պետական գույքի օգտագործման հասանելիության, մատչելիության և շահավետության բարձրացում.

2) պետական գույքի տնտեսական շրջանառման գործընթացի ընդլայնում (վարձակալություն, հավատարմագրային կառավարում).

3) պետական գույքի տարբերակված գնահատում՝ ելնելով գույքի գործառնական նշանակությունից:

3.8 . Կադաստր

Արցախի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնական ուղղություններն են.

1. գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում՝

1) երկրի հեռահար զոնդավորման ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով հանրապետության ամբողջ տարածքի բազային պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների թարմացում.

2) միջազգային գեոդեզիական համակարգում պետական և տեղական նշանակության քարտեզագրման ու գեոդեզիական աշխատանքների շարունակական իրականացում.

2. հողաշինարարության ոլորտում հանրապետության հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի կազմման նպատակով նախապատրաստական աշխատանքների իրականացում.

3. անշարժ գույքի կադաստրային գնահատման ոլորտում անշարժ գույքի շուկայի դիտարկումների և վերլուծությունների հիման վրա գյուղատնտեսական նշանակության հողերի որակական գնահատման դասակարգիչների վերանայում՝ կիրառելով գնահատման նոր մեթոդիկա՝ ժամանակակից գնահատման մոտեցումները տեղայնացնելով մեր տնտեսության պայմաններում.

4. իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների մատչելիության բարձրացում, մասնավորապես, գրանցման և տեղեկատվության տրամադրման ժամկետների կրճատում, անկախ գույքի գտնվելու վայրից իրավունքների պետական գրանցման իրականացում, ինչպես նաև առցանց ծառայությունների մատուցման համակարգի ներդրում:

4. Սոցիալական ոլորտը

4.1 . Կրթություն և գիտություն

2017-2020 թթ. կրթության ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված կլինի համակարգի բովանդակային, կառուցվածքային և կառավարման խնդիրների լուծմանը, կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը:

Նախադպրոցական կրթության ոլորտում կշարունակվի ժամանակակից նախադպրոցական հաստատությունների ստեղծման ծրագիրը՝ ապահովելով վերջիններիս համաչափ բաշխվածությունը և նախադպրոցական ծառայությունների մատչելիությունը:

Հանրակրթության ոլորտում բարեփոխումների արդյունավետության բարձրացման նպատակով կիրականացվեն գիտական հետազոտություններ: Կսահմանվեն կրթական նոր չափորոշիչներ, կվերանայվեն ուսումնական ծրագրերը, կմշակվի և կիրագործվի դպրոցական համակարգի օպտիմալացման ծրագիր: Կներդրվեն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների, նրանց առաջադիմության գնահատման ժամանակակից, բազմագործոն ձևեր և մեթոդներ, դպրոցների կառավարման նոր մեխանիզմներ, հանրակրթական հաստատությունների տնօրենների ընտրության նոր չափանիշներ:

Կմշակվեն և կիրագործվեն ուսուցիչների վերապատրաստման, ատեստավորման և մասնագիտական կատարելագործման նոր մեխանիզմներ:

Կվերանայվի և կարդիականացվի ներառական կրթության համակարգը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության ապահովման համար կներդրվեն արդյունավետ ծրագրեր:

Ուշադրության կենտրոնում կլինեն գյուղական դպրոցների զարգացման խնդիրները: Փոքր համայնքների դպրոցների կրթության առանձնահատկություններից ելնելով կներդրվեն կրթության նոր մոդելներ: Աշխատանքներ կստարվեն գյուղական բնակավայրերում համացանցի հասանելիության ապահովման և ինտերակտիվ ուսուցման ներդրման նպատակով: Գյուղական համայնքների դպրոցներում որակյալ կրթության ապահովման խնդրի լուծմանը կներգրավվի նաև սփյուռքի ներուժը:

Կընդլայնվեն կրթության ոլորտում համահայկական և միջազգային համագործակցության ծրագրերը, կներդրվեն փոխանակման, մասնագետների վերապատրաստման և ոչ ֆորմալ կրթության ծրագրեր: Կմշակվի և կիրագործվի օտար լեզուների խորացված ուսուցման նոր հայեցակարգ: Հանրակրթական և

արտադարձական ուսումնական հաստատություններում կներդրվեն մասնագիտական կողմնորոշման նոր ծրագրեր՝ հիմքում ունենալով Արցախի տնտեսության գերակա ճյուղերը և աշխատաշուկայի պահանջարկը: Կշարունակվեն դպրոցների շենքային պայմանների բարելավման ծրագրերը: Լրացուցիչ միջոցներ կներգրավվեն կրթության նյութատեխնիկական բազայի արդիականացման նպատակով:

Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության ոլորտի զարգացման նպատակով կմշակվի նոր հայեցակարգ: Շուշիի «Եզնիկ Մոզան» արհեստագործական դպրոցի փորձը կներդրվի նաև հանրապետության մյուս շրջաններում: Կվերանայվեն և տնտեսության պահանջներին կհամապատասխանեցվեն Մարտունու և Ստեփանակերտի արհեստագործական դպրոցներում ուսուցանվող մասնագիտությունները:

Միջին մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտում պետպատվերի արդյունավետության գնահատման նպատակով կկատարվի աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն, կներդրվեն պետական աջակցությամբ կրթության նոր մեխանիզմներ:

Բարձրագույն կրթություն, գիտություն

Բարձրագույն կրթության ոլորտում կիրականացվեն օրենսդրական կարգավորումներ, Ազգային ժողով կներկայացվի «Բարձրագույն կրթության մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը: Կմշակվի և կիրագործվի բուհական համակարգի օպտիմալացման նոր ծրագիր: Կհստակեցվեն բուհերի լիցենզավորման ու հավատարմագրման պարտադիր պահանջների ապահովման վերահսկողության մեխանիզմները: Աշխատանքներ կտարվեն բարձրագույն կրթության ֆինանսավորման անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման, համակարգի կառավարման գործընթացում գործատուների ներգրավման, սոցիալական գործընկերության ձևավորման, ուսումնական և արտադրական փորձուսուցումների կազմակերպման ոլորտում համագործակցության ակտիվացման ուղղությամբ:

Ուշադրության կենտրոնում կլինեն սոցիալական տարբեր խմբերի և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար բարձրագույն և հետբուհական կրթության մատչելիության ապահովման, հեռակա ուսուցման համակարգի մասնագիտությունների խիստ հստակեցման, բուհերում ընդունելության գործընթացի վերահսկման նոր մեխանիզմների ներդրման, գիտական աստիճանաշնորհման համակարգի կատարելագործման խնդիրները:

Ուսանողների ու դասախոսների շարժունության ապահովման նպատակով կներդրվեն ՀՀ և օտարերկրյա բուհերի հետ փոխանակման ու վերապատրաստման նոր ծրագրեր:

Կմշակվեն և կներդրվեն բուհերին դրամաշնորհների տրամադրման, կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի կատարելագործման, վճարովի

ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողներին երկարաժամկետ ուսանողական վարկերի տրամադրման մեխանիզմներ:

Համակարգի արդյունավետ կառավարման նպատակով կներդրվեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Միջոցներ կձեռնարկվեն Արցախի պետական համալսարանի և Արցախի գիտական կենտրոնի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման և արդիականացման ուղղությամբ.

1) պայմանագրային հիմունքներով բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմաների մրցույթի պայմանների հստակեցում և խստացում՝ պետության համար առաջնահերթ կոնկրետ մասնագիտությունների սահմանում, համապատասխան գերատեսչությունների պատվերների ընդգրկում, երիտասարդների ներգրավվածության ապահովում, իրականացված թեմաների արդյունքների ուսումնասիրում և գնահատում.

2) Արցախի գիտական կենտրոն - ԱՀ համապատասխան գերատեսչություններ-պետական բուհեր-ՀՀ գիտահետազոտական ինստիտուտներ կապերի ընդլայնում.

3) գիտության զարգացմանն ուղղված ֆինանսական միջոցների աստիճանական ավելացում:

4.2 . Առողջապահություն

Առողջապահության ոլորտում առաջնահերթ խնդիրը շարունակում է մնալ առողջապահական ծառայությունների մատչելիության մակարդակի և որակի բարձրացումը:

Ազգաբնակչության առողջության պահպանմանը, հիվանդացության, մահացության և հաշմանդամության մակարդակի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների մեջ կշարունակի գերակա համարվել առաջնային բուժօգնության օղակի զարգացումը:

Կիրականացվեն մի շարք միջոցառումներ՝ նպատակաուղղված բնակչության բժշկական սպասարկման բարելավմանը, մասնավորապես՝

1) սկրինինգային ծրագրերի իրականացման շնորհիվ տարբեր հիվանդությունների վաղ շրջանում հայտնաբերման և կանխարգելման միջոցառումներ.

2) իմունիզացիայի պետական ծրագրի իրականացման շարունակականության ապահովում՝ կառավարելի վարակների կանխման համար.

3) բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավում, անհրաժեշտ գույքով և բժշկական պարագաներով համալրում.

4) կադրերի պատրաստում և շարունակական վերապատրաստում ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ արտասահմանյան տարբեր երկրներում.

5) սանիտարական մեքենաներով բուժհիմնարկների համալրում:

Մասնագիտացված բուժօգնության /հիվանդանոցային/ ծառայության ոլորտում կարևորվում է մատուցվող ծառայություններին շարունակական նոր որակ հաղորդելու անհրաժեշտությունը:

Այս ուղղությամբ կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝

1) հիվանդանոցային ցանցի արդիականացմանը զուգընթաց ախտորոշման և բուժման նոր մեթոդների ու տեխնոլոգիաների ներդրում.

2) Հանրապետական բժշկական կենտրոնում մագնիտոռեզոնանսային տամոգրաֆ սարքի ներդրում ու շահագործում.

3) ինսուլտի դեմ պայքարի նոր մեթոդների ներդրում.

4) հիվանդությունների բուժման նոր ուղեցույցների մշակում և ներդրում.

5) բաց դռների օրերի կազմակերպում՝ ինչպես Հայաստանի Հանրապետությունից, այնպես էլ արտասահմանյան տարբեր երկրներից հրավիրված մասնագետների մասնակցությամբ:

Մոր և մանկան առողջության բարելավման նպատակով կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝

1) շահագործման կհանձնվի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնի նոր շենքը՝ համալրված համապատասխան սարքավորումներով.

2) առանձնահատուկ ուշադրություն կդարձվի վերարտադրողական առողջության պահպանմանը՝ աստիճանաբար ներդնելով անպտղության կանխարգելման և բուժման ժամանակակից մեթոդներ:

Իրականացվող հետևողական ծրագրերի շրջանակներում շահագործման կհանձնվեն ուռուցքաբանական դիսպանսերի, Քաշաթաղի շրջանային բուժմիավորման նոր շենքերը՝ համալրված արդիական սարքավորումներով:

Հաշվի առնելով հանրապետության համար կարևոր ռազմավարական նշանակությունը՝ աշխատանքներ կտարվեն արյան բանկի ստեղծման ուղղությամբ՝ վերակառուցելով և ժամանակակից պահանջներին համահունչ դարձնելով ներկայումս գործող արյան փոխներարկման կայանի շենքը, համալրելով համապատասխան սարքավորումներով:

Կարևորվում է բժշկական ապահովագրական համակարգի աստիճանաբար ներդրումը և զարգացումը, ինչպես նաև դրան զուգընթաց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծավալների վերանայումը:

Կիրականացվեն նաև մի շարք միջոցառումներ, որոնք թույլ կտան բարձրացնել համակարգի աշխատանքի արդյունավետությունը, մասնավորապես՝

1) պետական պատվեր իրականացնող բուժհիմնարկների նկատմամբ վերահսկողության բարձրացում.

2) մասնավոր բժշկության զարգացմանը նպաստում.

3) բուժաշխատողների աշխատանքի վարձատրության ֆինանսական նոր մեխանիզմների մշակում և ներդրում:

Հատուկ ուշադրություն կդարձվի դեղային քաղաքականությանը՝ առանձնացնելով հետևյալ նախապատվությունները՝

1) արտոնյալ և անվճար կարգով բնակչության սահմանված խմբերին անվտանգ և արդյունավետ դեղորայքով առավելագույնս ապահովումը.

2) գյուղական բնակավայրերում դեղատնային գործունեության ծավալման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը նպաստելը:

Կշարունակվի գերակա համարվել բնակչության հիգիենիկ հակահամաճարակային անվտանգության ապահովումը, իրականացնելով՝

1) շենքային պայմանների բարելավման և արդիական բժշկական սարքավորումներով համալրման աշխատանքներ, այդ թվում առաջնահերթ խնդիր է համարվում ՊՇՌ լաբորատորիայի ներդրումն ու շահագործումը.

2) վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր.

3) շրջակա միջավայրի գործոնների բացասական ազդեցության կանխարգելմանն ուղղված միջոցառումներ.

4) ոլորտի նորմատիվ իրավական ակտերի մշակում և կիրառում.

5) ընդունված ստանդարտներին համապատասխան՝ կազմակերպություններում սանիտարահիգիենիկ պայմանների ստեղծման վերահսկողություն:

4.3. Սոցիալական պաշտպանություն, ժողովրդագրություն և վերաբնակեցում

Արցախի Հանրապետությունում սոցիալական պաշտպանության և վերաբնակեցման ոլորտում պետության խնդիրն է լինելու քաղաքացիների սոցիալական իրավունքի լիարժեք ու ամբողջական իրացման պայմանների ստեղծումը, սոցիալական արդարության սկզբունքի վրա հիմնված՝ սոցիալական պաշտպանության կարիք ունեցող անմրցունակ խմբերի համար առաջնահերթությունների սահմանումը, իրականացվող ծրագրերի ու մատուցվող ծառայությունների որակի, արդյունավետության ու հասցեականության բարձրացումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, բնակչության կայուն ու արդյունավետ զբաղվածության ապահովումը, արժանապատիվ աշխատանքի պայմանների ստեղծումը և ոլորտում սոցիալական երաշխիքների համակարգի զարգացումն ու ընդլայնումը, վերաբնակեցման գործընթացի ակտիվացումը:

Սոցիալական պաշտպանության քաղաքականության ոլորտում նախատեսվում է իրականացնել.

1) աշխատանքի իրավունքի ապահովում՝ աշխատանքի արտադրողականության և արդյունավետության աճին համապատասխանող իրական աշխատավարձի մակարդակի հետևողական բարձրացմամբ, նվազագույն ամսական

աշխատավարձի չափի ավելացում՝ վերջինիս և միջին ամսական աշխատավարձի միջև առկա տարբերության կրճատման նպատակով.

2) աշխատաշուկայի օբյեկտիվ իրավիճակից և միտումներից բխող զրադվածության պետական ճկուն քաղաքականության իրականացում՝ հստակ թիրախավորված ծրագրերի ներդրմամբ, որպես առաջնահերթություն՝ աշխատաշուկայում անմրցունակ, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների գործազուրկ անձանց կայուն զբաղվածության ապահովում.

3) բնակչության գործազրկության մակարդակի իջեցմանը, աշխատանք փնտրողների, մասնավորապես, երիտասարդների և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկայում մրցունակությունը բարձրացնելուն, նոր աշխատատեղերի ստեղծմանը, աշխատողների իրավունքների օրենսդրական պաշտպանվածության ամրապնդմանն ու աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրեր.

4) Արցախի Հանրապետությունում ընտանիքների կարիքավորության գնահատման արդյունքների հիման վրա տարբեր բնագավառներում իրականացվող սոցիալական ծրագրերի կատարելագործում և հասցեականության բարձրացում.

5) ծնելիության, բազմագավակության և ամուսնությունների խրախուսմանը, ինչպես նաև ակտիվ միգրացիոն քաղաքականության շնորհիվ բնակչության ներհոսքի խթանմանն ուղղված աշխատանքներ՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավման նպատակով.

6) աշխատանքային հարաբերությունների մեջ չգտնվող (վարձու աշխատող կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող) կանանց օրենքով սահմանված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցների հաշվին մայրության նպաստների տրամադրման շարունակում.

7) Արցախի սոցիալական ծրագրերի հիմնադրամի կողմից սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասվող անձանց պետական աջակցության ցուցաբերումը, որը կարտահայտվի այդ քաղաքացիներին տրված հիփոթեքային վարկերի տոկոսագումարի սուբսիդավորմամբ, հիփոթեքային վարկի կանխավճարի տրամադրմամբ, ինչպես նաև բնակելի տուն կառուցելու նպատակով գյուղական բնակավայրերում բնակվող երիտասարդ ընտանիքներին անհատույց ֆինանսական աջակցության ցուցաբերմամբ: Միաժամանակ կշարունակվի 1-ին և 2-րդ խմբերի զինվորական հաշմանդամների ընտանիքների կողմից օգտագործված էլեկտրաէներգիայի և բնական գազի դիմաց պետական ֆինանսական աջակցության տրամադրման ծրագիրը: Իրականացվող ծրագրերի շրջանակները հետագայում կընդլայնվեն՝ սոցիալական ապահովության կարիք ունեցող այլ խմբերի ընդգրկմամբ, ինչպես նաև աշխատանքներ կտարվեն դրամաշնորհների չափերի ավելացման ուղղությամբ.

8) բազմագավակ ընտանիքների, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց բնակարանային ապահովությանն

ուղղված ծրագրերի շարունակում, մասնավորապես, 5 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին բնակելի տների հատկացում.

9) պետական բյուջեի միջոցների հաշվին վճարվող նպաստների միջոցով աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց հիվանդության, ինչպես նաև հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում կորցրած եկամտի փոխհատուցման շարունակում.

10) կենսաթոշակային համակարգի կառավարման, ինչպես նաև կենսաթոշակառուներին մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում, մասնավորապես՝

ա. կենսաթոշակառուների հաշվառման նոր էլեկտրոնային համակարգի շահագործում, որը հնարավորություն կտա մեկ տեղեկատվական շտեմարանի ներքո միավորել բոլոր տեսակի կենսաթոշակների և դրանց զուգահեռ վճարվող այլ սոցիալական հատուցումների վերաբերյալ առկա տեղեկատվությունը,

բ. զինվորական կենսաթոշակների՝ անկանխիկ եղանակով վճարումների (կենսաթոշակի գումարն անձի քարտային հաշվին փոխանցելու միջոցով) համակարգի ներդրում.

11) կենսաթոշակային համակարգի փոխհատուցման գործակցի բարձրացմանն ու կենսաթոշակառուների սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված աշխատանքների շարունակում.

12) սոցիալական իրավունքների արդյունավետ իրացման նպատակով ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ստեղծում՝ սոցիալապես անապահով անձին (ընտանիքին) որակյալ և մատչելի, իր կարիքներին համարժեք, «մեկ պատուհանի» սկզբունքով սոցիալական համալիր ծառայությունների տրամադրման նպատակով.

13) երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի աստիճանական զարգացում, առանց ձևողական խնամքի մնացած երեխաների կենցաղային պայմանների բարելավում, նրանց իրավունքների պաշտպանությանն ու հասարակության մեջ ինտեգրմանն ուղղված ծրագրեր.

14) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման նպատակով մատչելի միջավայրի և հավասար պայմանների ու հնարավորությունների ապահովում, նրանց վերականգման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ.

15) տարեցների, միայնակ և խնամքի կարիք ունեցող անձանց կյանքի որակի բարձրացում, Հայրենական մեծ պատերազմի վետերանների, հաշմանդամ դարձած զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության բարելավմանն ուղղված միջոցառումներ, նրանց տրամադրվող դրամական հատուցումների չափերի պարբերաբար բարձրացում.

16) «Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքի ընդունման նախաձեռնում՝ սոցիալական պաշտպանության ոլորտում տարվող աշխատանքների առավել ժամանակակից մեթոդների կիրառման և սոցիալական աշխատողի իրավական կարգավիճակի հստակեցման նպատակով:

17) «Կետություն-մասնավոր հատված» գործընկերության զարգացում ու խորացում՝ սոցիալապես խոցելի խավերին լրացուցիչ սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով:

Վերաբնակեցման բնագավառում նախատեսվում է վերաբնակեցման պետական քաղաքականության նոր սկզբունքների մշակում, վերաբնակեցման կազմակերպման և իրականացման կարգի ու պայմանների փոփոխությունների իրավական ամրագրում:

Կակտիվացվի հայրենադարձության գործընթացը՝ շեշտադրում կատարելով սփյուռքահայության հետ կապերի ամրապնդման և հայրենադարձության գործընթացում վերջինիս դերի բարձրացման, վերաբնակիչների սոցիալական ադապտացման ու ինտեգրման ծրագրերի, ինչպես նաև վերաբնակ ընտանիքներով համալրված բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգերի մշակման և իրականացման վրա, ինչպես նաև վերաբնակեցման ծրագրերի իրականացման նպատակով ֆինանսական աղբյուրների ապահովում:

Կշարունակվեն Ադրբեջանից բռնագաղթված Արցախի Հանրապետությունում ապաստանած և որպես փախստական հաշվառված անձանց սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերը:

Կշարունակվեն նաև փախստականի հաշվառման վկայական ունեցող և բնակելի շինությունների վերակառուցման հետևանքով վարձակալական հիմունքներով բնակվող, ինչպես նաև առավել ծանր պայմաններում գտնվող սոցիալական առանձին խմբերի պատկանող ընտանիքների վարձավճարների փոխհատուցման ծրագրերը:

4.4. Մշակույթ և զբոսաշրջություն

Մշակույթ

Մշակույթի ոլորտում կշարունակվեն ազգային մշակույթի պահպանման և հանրահռչակման, համահայկական ու միջազգային համագործակցության ընդլայնման ուղղությամբ աշխատանքները: Կհստակեցվեն ու հանրության համար ընկալելի կդառնան մշակութային քաղաքականության սկզբունքները եւ նպատակները:

Կհստակեցվեն ոլորտի կառավարման լիազորությունները, կբարձրացվի կառավարման արդյունավետությունը:

Պետական հոգածության տակ գտնվող ստեղծագործական կոլեկտիվների համար կապահովվի ինքնադրսևորման հավասար հնարավորություններ, կուժեղացվի պետական աջակցությունը բնակչության մշակութային ինքնագործունեության զարգացման ուղղությամբ:

Նախորդ տարիներին հանրապետությունում մշակութային կենտրոնների, դահլիճների և կրթական հաստատությունների շենքային պայմանների բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքներն կհամալրվեն Արցախի պատմության պետական թանգարանի նոր շենքի, Ստեփանակերտում մշակութաժամանցային նոր համալիրի, ժամանակակից գրադարանի կառուցման աշխատանքներով:

Շրջկենտրոններում և հատկապես գյուղական համայնքներում մշակույթի տների շենքային պայմանների բարելավման և նյութատեխնիկական բազայի ապահովման աշխատանքներին զուգահեռ կմշակվեն և կիրառործվեն մշակույթի միջոցով համայնքների զարգացման նոր ծրագրեր:

Թանգարանային գործի բնագավառ

Թանգարանային գործի բնագավառում կշարունակվեն միջոցներ ձեռնարկվել գործող թանգարաններին ցուցաբերվող պետական աջակցության ընդլայնման, նոր թանգարանների ստեղծման ուղղությամբ: Պետությունը կշարունակի միջոցներ ձեռնարկել մասնավոր թանգարանների ստեղծման աջակցության նպատակով:

Ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտ

Ոլորտում պետական քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով կիրականացվեն իրավական կարգավորման աշխատանքներ: Փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքում, «ԼՂՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում, ԼՂՀ քրեական օրենսգրքում:

Պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառ

Ոլորտում առաջիկա տարիներին կշարունակվեն ուսումնասիրման, հետազոտման և վերականգնման աշխատանքները:

Կշարունակվի մասնավոր հատվածի հետ համագործակցությունը՝ հուշարձանների պահպանման, ուսումնասիրման և վերականգնման աշխատանքներին ներգրավելու հարցում:

Նոր ծրագրեր կմշակվեն ու կիրականացվեն պատմամշակութային արգելոցների զարգացման և արդիականացման ուղղությամբ:

Կշարունակվեն Արցախի պատմամշակութային հուշարձանների հանրահռչակաման աշխատանքները:

Զբոսաշրջության բնագավառ

Առաջիկա տարիներին զբոսաշրջության բնագավառում զբոսաշրջային դիվերսիֆիկացված արդյունքի ձևավորման ու իրացման համար նախապատրաստական ակտիվ աշխատանքներ են տարվելու: Նոր ենթակառուցվածքների ստեղծման, բացառիկ ծառայությունների ներդրման շնորհիվ նախատեսվում է Արցախը վերածել մեծ պահանջարկ ունեցող զբոսաշրջային ուղղության:

Շարունակվելու են արդեն ձևավորված զբոսաշրջային արդյունքի հանրահոշակման աշխատանքները տարբեր հարթակներում:

Զբոսաշրջության միջոցով տարածքային համաչափ զարգացման քաղաքականության շրջանակներում կխթանվի գյուղական համայնքներում ավանդական զբոսաշրջային տների ստեղծումը՝ մեթոդական աջակցության և ներդրումային ճկուն քաղաքականության շնորհիվ:

Կմշակվեն ներդրումային ծրագրեր՝ զբոսաշրջային մեծ ներուժ ունեցող զբոսաշրջավայրերի կայուն զարգացման, նոր աշխատեղերի ստեղծման և համաշխարհային զբոսաշրջային շուկայում նոր առաջարկներով հանդես գալու նպատակով:

4.5. Սպորտ և երիտասարդություն

Սպորտ

Ոլորտում առանձնակի ուշադրություն կդարձվի սպորտի մասսայականացման, առողջ ապրելակերպի պայմանների ապահովման, նոր մարզադահլիճների կառուցման, մարզադպրոցներում սաների ընդգրկվածության ընդլայնման, օլիմպիական և ոչ օլիմպիական մարզաձևերի ցուցանիշների բարձրացման, մարզական ֆեդերացիաների ակտիվ գործունեության և այլ ուղղություններին:

Սպորտի ոլորտի համակարգը միտված է անձի, ընտանիքի և հասարակության մեջ ֆիզիկական դաստիարակությամբ զբաղվելու գաղափարը սերմանելուն, պետական և ազգային մտածողությունն ամրապնդելու գործընթացն ապահովելուն: Համակարգը Արցախի Հանրապետության համար ունի առաջնային նշանակություն, քանի որ այն նախ և առաջ միտված է ֆիզիկապես կոփված, կրթված ու հայրենասեր սերնդի ձևավորմանը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քաղաքականության արդյունավետ իրականացումը պահանջում է բազմակողմանիորեն մշակված գործողությունների համալիր ծրագիր, որտեղ կընդգրկվեն հետևյալ հիմնադրույթները՝

1) ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու, իր նախասիրած մարզաձևն ընտրելու, մարզական կազմակերպությանն անդամակցելու, ինչպես նաև ֆիզկուլտուրային և օլիմպիական շարժմանը մասնակցող անձանց հավասար իրավունքների ապահովումը.

2) բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովումը.

3) «ֆիզիկական կուլտուրա» առարկայի պարտադիր դասավանդումն ուսումնական բոլոր հաստատություններում՝ ուսումնառության ամբողջ ընթացքում.

4) Արցախի Հանրապետության առաջնություններին, համահայկական և օլիմպիական խաղերին, աշխարհի ու Եվրոպայի առաջնություններին, համաշխարհային ունիվերսիադաներին, միջազգային մրցաշարերին Արցախի հավաքական թիմերի ու մարզիկների նախապատրաստման և մասնակցության ֆինանսավորումը Արցախի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, ինչպես նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

5) մանկապատանեկան մարզադպրոցների ցանցի ընդլայմանը, դրանց նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը և մարզիչ-մանկավարժների սոցիալական վիճակի բարելավմանն աջակցելը:

6) բնագավառի համար կադրերի (այդ թվում՝ հաշմանդամների հետ աշխատող) պատրաստմանն աջակցելը, նրանց որակավորման բարձրացման ու վերապատրաստման ապահովումը, բնակչության ֆիզիկական դաստիարակության, առողջ ապրելակերպի և բարձրագույն նվաճումների սպորտի հիմնահարցերին վերաբերող գիտական հետազոտությունների հիմնախնդիրների ֆինանսավորումը:

7) աջակցություն ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական և ուսումնական կառույցների պահպանմանն ու նպատակային օգտագործմանը, նորերի կառուցմանը:

8) միջազգային մարզական կառույցներում երկրի ներգրավվածության ապահովումը, միջազգային մրցասպարեզներում, հատկապես օլիմպիական խաղերում, համաշխարհային և մայրցամաքային առաջնություններում, տարածաշրջանային համալիր մրցաշարերում մարզական բարձր արդյունքներ ցուցաբերելու և մրցանակային տեղեր զբաղեցնելու միջոցով երկրի վարկանիշի բարձրացումը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի զարգացման քաղաքականության հիմնական նպատակն է՝ ֆիզիկական ակտիվության, առողջության և ակտիվ կենսակերպի ամրապնդման, անհատի ներդաշնակ զարգացման, աշխատունակության բարձրացման և երկարակեցության ապահովումը, տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատության և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության հնարավորության ընձեռումը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստակալության համար նպաստավոր պայմանների ստեղծումը, պետական ծրագրի միջոցով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համակարգի կատարելագործումը:

Երիտասարդություն

Երիտասարդության ոլորտում առկա խնդիրների լուծումը և հետևողական քաղաքականության իրականացումը կապահովեն Արցախի զարգացման գործում երիտասարդության գործուն մասնակցությունը:

Կհստակեցվեն երիտասարդության բնագավարում պետության կողմից իրականացվող քաղաքականության հայեցակարգերը: Առաջնահերթություն կտրվի այն ծրագրերին, որոնք բարենպաստ պայմաններ կստեղծեն երիտասարդների ինքնիրացման և ինքնադրսևորման համար: Որակյալ կրթությունը, զբաղվածության ապահովումը, երիտասարդության սոցիալական խնդիրների լուծումը պահանջում են ոլորտային բարեփոխումներ և պետական աջակցության նոր մեխանիզմներ: Առարկայական միջոցներ կձեռնարկվեն լեզուների իմացության, տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետման, Արցախի երիտասարդության մտավոր ներուժի իրացման, արդյունավետ հաղորդակցության և զարգացման ուղղություններով: Այդ նպատակով կիրականացվեն համապատասխան ծրագրեր, նոր հնարավորություններ կստեղծվեն երիտասարդության առողջ ապրելակերպի խթանման և ազատ ժամանցի կազմակերպման ուղղությամբ:

Կշարունակվեն երիտասարդների հասարակական-քաղաքական ակտիվության խթանման, արժեքային կողմնորոշման համար դրական դաշտի ձևավորման, շրջաններում պետական երիտասարդական քաղաքականության համաչափ իրականացման, գյուղի երիտասարդության ներուժի ակտիվացման և զարգացման ծրագրերը: Կկատարելագործվեն ու առավել թափանցիկ կդառնան երիտասարդական հասարակական կազմակերպություններին պետական աջակցության տրամադրման մեխանիզմները, կապահովվեն ինքնադրսևորման հավասար հնարավորություններ:

Կընդլայնվի համահայկական և միջազգային երիտասարդական համագործակցությունը: